Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ռուսերեն

Դասագիրք

Դասարան 1905

Հ. Ա

891.99
Մ-28

ՂԵՒՈՆԴ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԽԱՂՊԱՆԵԱՆՑԻ

ԵՐԳԵՐԸ

„ՇԻՐՎԱՆԻ“

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԳԻՐՔԸ

Ռ. Տպագրութիւն

ՀԱՏՈՐ Ա.

ՎԱԴԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

1905

1.99
28

19 NOV 2011

ՂԵՒՈՆԴ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԽԱՉՊԱՆԵԱՆՑԻ ԵՐԳԵՐԸ

„ՇԻՐՎԱՆԻ“

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԳԻՐՔԸ

Բ. Տպագրութիւն.

ՀԱՏՈՐ Ա.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1905

08 MAY 2013

34449

Дозволено цензурою 16 Ноября 1904 г. г. Тифлисъ.



***

Երջրու և կարդա իմ փոքրիկ գիրքը,
Ձեռքիդ վարդ ու նունուֆար պիտի դառնայ.
Թէ աւելացել է քո ցաւն ու վէրքը,
Դիր ցաւերիդ վերայ ճար պիտի դառնայ։

Մի մարդ որ կողոպտէ, զրկէ ընկերին,
Նրանով պահպանէ իւր որդիներին,
Նրա որդիներն դուր չեն գալ Տէրին,
Նրանցից ինչ հայր ու մայր պիտի դառնայ։

Որոմն ցանես, ցորենի հասկ չի դուրս գալ,
Թուզի ծառից փուշ ու տատասկ չի դուրս գալ,
Չար լեզուից՝ լաւ, բարի խօսք չի դուրս գալ,
Չարիցը ծնողը չար պիտի դառնայ։

Ծուռն պիտի գնայ իւր ծուռութիւնով,
Գործերն չի տանիլ իւր դիւրութիւնով
Անձն էլ կը խաւարէ իւր կուրութիւնով.
Մեղքն մեղքի վերայ սար պիտի դառնայ։

Ղևոնդ, ծուռն թողնելով իւր լսածը,
Էլի պէտք է անէ իւր ասածը.
Դու միշտ յիշիր քո ստեղծող Աստուածը,
Մարմինդ հող՝ նշանդ քար պիտի դառնայ։

0 8 MAY 2013

ՈՎ ՄԱՐԴ.

Ով մարդ թէ ընկել ես դու մեղքերի մէջ,
Մի ուշանար, շուտ ապաշխարող եղիր,
Քո դեղն կը գտնես սուրբ գրքերի մէջ,
Աշխատիր վերքերիդ դեղ ճարող եղիր։

Առեղծողից խնդրիր մեղքիդ թողութիւն,
Առողջութիւն, և գործիդ յաջողութիւն,
Եղբայր, դու մի սիրիր երբէք գողութիւն,
Աշխատիր մեղքերէ դադարող եղիր։

Ուղիղ ճանապարհից երբէք մի ծռուիր,
Հարևանիդ, ընկերիդ հետ մի կռուիր,
Կեանքիդ խղճա, մեղքերի մէջ մի խրուիր,
Աշխատիր լաւ, բարի կեանք վարող եղիր։

Անգութ, ժլատ, չար մարդկանցից հեռացիր,
Աղքատ, տնանկ, խեղճ որբերին տիրացիր,
Բարի, խելօք, լաւ մարդկանց ընկերացիր,
Աշխատիր բարի գործ կատարող եղիր։

Սիրելիս, մի լինիր երբէք շատ խօսող,
Կամ շատերին մատնող և շատ բամբասող,
Եղիր բարի խրատների շատ լսող,
Աշխատիր լսող և կատարող եղիր։

Ղևոնդ, այս է քեզանից իմ խնդիրքը,
Որ չի կորցնես քո՝ բնական ձիրքը.
Դիշեր ցերեկ դու քո՝ այդ փոքրիկ գիրքը,
Աշխատիր խօսքերով զարդարող եղիր։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԿՄ Ա. Մասիսյանի
անվան

ՄԻ՛ ՊԱՐԾԵՆԱՔ.

Մի պարծենաք հագուստներով փառաւոր,
Ձեզի ոչ մետաքսը ոչ շալ կը մնայ.
Այս աշխարհն ունայն է և անցաւոր,
Ոչ ցնծութիւն, և ոչ խնդալ կը մնայ։

Պատրաստուեցէք, թող ոչ ով չծուլանայ,
Ականջ արէք, թող ոչ ով չխուլանայ,
Կը գայ մի օր, ծնկներդ կը թուլանայ,
Ոչ զօրութիւն, ոչ ջան, ոչ հալ կը մնայ։

Մի օր էլ կը կանգնի գլխիդ հոգեհան,
Հոգիդ կառնի, քեզ կը թողնի անկենդան,
Դու կը գնաս, քեզ հետ էլ և ամեն բան,
Լաւութիւն, վատութիւն, տուրք տալ կը մնայ։

Անիրաւ, աներկիւղ, անմիտ ագահը
Ամեն օր փնտրում է իւր մարմնոյ շահը.
Շուտով մի օր վրա կը հասնի մահը,
Նորան էլ ոչ դովլաթ, ոչ մալ կը մնայ։

Ղևոնդ, դու պատրաստուիր կը գայ քո հերթը,
Վերադ կը կարդացուի հոգոցի թերթը.
Քեզ կը դնեն խոնաւ ու խաւար բերդը.
Հող կը դառնաս, վրադ մի սալ կը մնայ։

ՄԻ՛ ԾՈՒԼԱՆԱՐ.

Մի ծուլանար որդեակ, շուտ ելիր ոտքի,
Արհեստ սիրէ, գործ սիրէ, ընկեր սիրէ,
Ուշ ու միտքդ տուր միշտ ժամի, աղօթքի,
Ժամտուն սիրէ, վանք սիրէ, պատկեր սիրէ։

Վերկաց շուտով գնա դու ուսումնարան,
Կարդա Աստուածաշունչ և Աւետարան,
Թէ ուզում ես օրհնէ քեզ ամէն բերան,
Վարժարան սիրէ, վարժապետ սիրէ, ծեր սիրէ։

Էլ շատ մի ուշանար, բարձրացիր վեր կաց.
Տուն ու տեղիդ վերայ՝ իշխիր, և տէր կաց.
Քաջ-արի տղամարդ, խաղաղասէր կաց,
Հայրենիք սիրէ, եղբայր սիրէ, հէր սիրէ։

Սիրելիս, աշխատիր սուրբ գրքեր սիրիր,
Կարդա սուրբ խօսքերն՝ սրտիդ մէջ գրիր.
Ցուսով և հաւատով Տիրոջը խնդրիր,
Յոյս սիրէ, հաւատ սիրէ, սէր սիրէ։

Ղևոնդ, շատ սէր մի տուր հագուստին՝ փողին,
Ցանկարծ կը հասնի մահ, կը զոհուես հողին,
Նայիր բարձրին, միշտ փառք տուր Ստեղծողին,
Երկինք սիրէ, Աստուած սիրէ, Տէր սիրէ։

ՀՊԱՐՏ ՄԱՐԴՈՒՆ.

Վ մարդ չափից դուրս էլ մի հպարտանար,
Պճնուած թանկագին ալ ու աղլաստում.
Աշխարհիս ապրանքով շատ մի պարծենար,
Ամանչ արա խօսքիս, տես ինչ եմ ասում։

Այս ապրանքն միշտ այստեղ մնացող է,
Մարդը նրան թողնող և գնացող է,
Սկզբիցն հող էր, վերջն էլ հող է,
Այսն օր չի մնալ թանկագին խաստում։

Այս աշխարհն շատ օրեր է անցրել,
Շատ գիտուններ և կուրեր է անցրել.
Քեզ նման անթիւ հիւրեր է անցրել,
Դու վերջինն ես հիմա քեզ է սպասում։

Արձակ, լայնատարած, մեծ տեղեր ունի,
Տեսակ տեսակ ազգեր և ցեղեր ունի.
Շատ մարդիկ, քաղաքներ և գեղեր ունի,
Դասաւորած պահած ամեն մի մասում։

Նա շատերին որսում ճամբու է դնում,
Նրանց տեղը նոր հիւրեր է ընդունում.
Այսն օր շարունակ գալիս են գնում,
Դեռ աւելանում է, որ չի պակասում։

Շատին էլ իւր կարմիր օրերից զրկում,
Բռնում ու յաւիտեան կորուստ է զրկում.
Այնքին է տանջում, մէկին չէ փրկում,
Ոմանց էլ կենդանի կեանքն է ջնջում։

Մեր կեանքն հինգ օր է, կէս մասն սև է,
Զկարծես մինչև վերջ կարմիր կը տևէ.
Զուր մի ընկնիր հպարտութեան հետևէ,
Երբեմն էլ գանուիր ծռում և պասում։

Ղևոնդ, դու չես դառնալ խօսք կապող շայիր,
Դու քո խմացածն քեզ համար պահիր.
Այնպէս մարդու վերայ երբէք մի նայիր,
Որ հպարտ է, անձն միշտ վեր է դասում։

ԱՄԲԱՐԻՇՏ ՄԱՐԴՈՒՆ.

Ով մարդ, ամբարշտութիւնից փախիր, հեռացիր,
Ամբարշտութիւնը քո գլխիդ ցաւ կը դառնայ.
Այդ բնութիւնը սրտիցդ հանիր, մոռացիր,
Թէ չէ՝ ամբողջ աշխարհին չաւ կը դառնայ։

Զար գործերի մէջ երբէք ուրախ մի լինիր,
Հեռացիր չարիցն, անվախ մի լինիր,
Ամբարիշտ, խռովարար, խարդախ մի լինիր,
Խռովութիւնը գլխիդ՝ կռիւ ու դաւ կդառնայ։

Այս աշխարհը մէկ ալեկոծման ծով է,
Մարդիկ կուգան, կերթան. մնացողն ով է.
Ով մարդկանց հետ կռուէ, և միշտ խռովէ,
Նրան տատանուող ու խեղդող նաւ կդառնայ։

Աշխատիր մարդկանց հետ միշտ սիրով վարուիր,
Ամբարշտից, չարից միշտ հրաժարուիր.
Քո ստեղծողիդ հնազանդուիր, խոնարհուիր,
Կը յաջողվէ բանդ, և լաւ կը դառնայ։

Կը գան ու կանցնեն կենացդ օրեր,
Կը հինանայ աչքիդ՝ քո ամեն նորեր.
Կը հանեն վրայիդ թանկագին շորեր,
Լաւ հագուստդ հինդ գաղ՝ կոտաւ կը դառնայ։

Կը խաւարուի մի օր աչքիդ ամեն բան,
Կը մնաս վայր ընկած անշունչ անկենդան.
Քեզ կը տանեն և կը դնեն գերեզման,
Մարմնիդ կը փտի, հող ու կաւ կը դառնայ։

Ղևոնդ, ով որ ամբարշտութեան մէջ կը լինի.
Դժոխքը նրան վառ ու անշէջ կը լինի.
Աշխարհս էլ կանցնի և վերջ կը լինի,
Նրա հոգին սատանին գրաւ կը դառնայ։

ՄԱՐԴ ԿԱՅ.

Մարդ կայ՝ եթէ նրան մի անգամ ասաս,
Կը հասկանայ նա՝ հազար մի անգամ.
Մարդ կայ թէ ասես էլ մի անգամ հազար,
Կը հասկանայ էլի դժուար մի անգամ։

Մարդ կայ գիտնական ստացած մեծ ուսում,
Խաւարիցը հեռու՝ մանկը գայ լուսում.
Շատ լսում է, կարճարօտ ու քիչ խօսում,
Ստացել է խելք ու հանճար մի անգամ։

Մարդ կայ՝ որի շատ սիրած բանը փող է,
Սուտ-սուտ երդումներով միշտ մարդ խաբող է.
Փողով հոգին ու հաւատը կը փոխէ
Եւ կը դառնայ կրակի պաշար մի անգամ։

Մարդ կայ՝ չի բարկանալ միշտ կը համբերէ,
Ոխ չի պահիլ, իւր թշնամուն կը ներէ,
Որբին, խեղճին, կպահպանէ կը սիրէ,
Եւ կստանայ անուն պայծառ մի անգամ։

Մարդ կայ՝ ինքն չի սիրի անել բարութիւն,
Այլոց էլ կը սովրեցնէ անել չարութիւն.
Չի ըմբռնիլ կեանք, մահ, ոչ էլ յարութիւն,
Նա վայր կընկնի վատ ու վատթար մի անգամ։

Մարդ կայ՝ քանի որ կեանք ունի կենդան է,
Վատութեան փոխարէն լաւութիւն կանէ.
Իրա ունեցածից բաժին կը հանէ,
Կը կանչէ ու կտայ բար մի անգամ։

Մարդ կայ՝ սիրտը դարձրել է լեռ քարի,
Ուշ ու միտքն տուել չար ճանապարհի,
Յետ չի դառնում շատ ամիսներ ու տարի,
Նրա սիրտն մտել է չար մի անգամ։

Մարդ կայ՝ մեղաւոր է, ունի շատ մեղքեր,
Ապաշխարում է միշտ՝ ցերեկ և գիշեր,
Քրիստոսն՝ ողորմած և մարդասէր,
Կը տայ նրա ցաւերին ճար մի անգամ։

Մարդ կայ Մարդու Որդուն արծաթով ծախեց,
Մատնեց, խաչեց և արիւնով շաղախեց,
Կախաղանի վերայ ինքն իրան կախեց,
Խեղդուեց ու դնաց խաւար մի անգամ։

Մարդ կայ մարդկանց՝ և աշխարհի Փրկիչ է,
Երկնքի և երկրի լոյս քարոզիչ է,
Օրէն հազար թէ փառք տանք նրան քիչ է,
Եկաւ ու խաչուեց մեզ համար մի անգամ։

Մարդ կայ՝ Ղևոնդ, մեղաւոր և յանցաւոր,
Ապաշխարիր դու էլ տեսնես մի լաւ օր.
Այս աշխարհը ունայն է և անցաւոր,
Կուրծքիդ վերայ կկանգնի քար մի անգամ։

Ա՞Խ ԻՆՉ ԱՆԵՄ ԵՍ.

Անկարծ ձեռքիս միջից թև առաւ թռաւ,
Իմ թառլան թռչունս՝ ա՜խ ինչ անեմ ես.
Ուրախութիւնս վրաս սև արաւ դրաւ,
Քանդեց գլխիս տունս, ա՜խ ինչ անեմ ես։

Օրս սևցուց, ինձի անճրագ թողեց,
Այրեց լեարդս, սրտումս կրակ թողեց.
Քանդեց տունս խարաւ՝ աւերակ թողեց,
Ջնջեց իմ անունս, ա՜խ ինչ անեմ ես։

Սիրտս լցուեց բարձրացաւ սարի պէս,
Շատ կոշտացաւ կարծրացաւ քարի պէս.
Կեանքս մաշուեց, բարակացաւ լարի պէս,
Միջից կտրուեց սիւնս՝ ա՜խ ինչ անեմ ես։

Գիշեր ցերեկ սիրտս հալում մաշում եմ,
Ոչ ուտում, ոչ խմում և ոչ ճաշում եմ.
Անհամբեր ճամբէքին ես միշտ աչում եմ,
Էլ չի տանում քունս, ա՜խ ինչ անեմ ես։

Հասաւ ձմեռ, ես մի հատիկ ցնցի,
Գարնանը անվարդ՝ անղատիկ ցնցի,
Ամառը դլխաբաց՝ բոբիկ ցնցի,
Խաւարուեց աչունս, ա՜խ ինչ անեմ ես։

Արի աղաւնեակս, տես ուր եմ ապրում,
Առանց քեզ հոգեակս, ես դուր եմ ապրում,
Սիրտս միշտ լալիս է տխուր եմ ապրում,
Գնա՜ ուրախութիւնս, ա՜խ ինչ անեմ ես։

Ղևոնդս թռչունիս լաւ ճանաչելով,
Ձեմ դադարում երբէք՝ նրան կանչելով.
Նրա համար անձս՝ կեանքս տանջելով,
Ցամքեցաւ արիւնս, ա՜խ ինչ անեմ ես։

ԽԱՐԵԲԱՑ ԱՇԽԱՐՀ.

Ո՜վ խաբեբայ աշխարհ անարդարադատ,
Քանի՞ մարդ խաբելով գցար թոռիդ մէջ.
Ոչ լաւին լաւ ասար, և ոչ վատին վատ,
Շատ թացերին էլ այրեցիր չորիդ մէջ։

Մարդկանց կրակեցիր բարձրացաւ բոցն,
Չկտրեցիր նոցանից քո լաց ու կոծն.
Բաց անելով քո մութ ու խաւար ծոցն,
Բոլոր հանդիպողաց խեղդաւ հորիդ մէջ։

Ոմանց խաբելով՝ մեղանչել թոյլ տուեցիր։
Որը մէկ տուն չինեց, դուն փուլ տուեցիր,
Որտեղ լաւ մարդ տեսար շուտ կուլ տուեցիր,
Ողջ արարած աշխարհ՝ առաւ փորիդ մէջ։

Դու շատերին քաղցրացնում ես դանձովդ,
Բռնում ու պինդ փաթաթում ես ցանցովդ.
Ուղածիդ պէս քշում ես քո սանձովդ,
Ձգում մութ ու խաւար քո սև օրիդ մէջ։

Անհովիւ տեսնելով հովուեցիր հօտը,
Կամաց կամաց, մէկ-մէկ, կտրեցիր ոտը.
Այնպէս կորցրիր որ՝ չեկաւ հոտը,
Ղևոնդին էլ ձգեցիր խմորիդ մէջ։

ԱՆԻՐԱԻ ԲԱՂԴ.

Լ՛վ դու բաղդ անիրաւ՝ և փոփոխական,
Այնչափ նեղանում եմ ես քո մի բանից.
Շատ յիմարներ դարձնում ես բանական,
Խելքները չինում անբան անբանից։

Ում հետ հակառակուես, բանն կը ձախես,
Թանկ կեանք ու արևն էժան կը ծախես.
Բաներն կը խառնես և կը խարդախես,
Կը չինես աւարա ամենայն բանից։

Դու լաւ մարդկանց հետն միշտ թշնամի ես,
Կը դաս ու շուտ կանցնես, դատարկ քամի ես.

Դառն, թթու, տեսակ-տեսակ համի ես,
Անկարգ ու անկանոն՝ դուրս ես սահմանից։

Քեզ ով ասաւ այդքան անիրաւ դառնաս,
Գործս չինելու տեղ՝ գլխիս ցաւ դառնաս.
Ի՞նչ կը լինի մի օր փոխուես լաւ դառնաս,
Ազատես ինձ և դուրս բերես զնդանից։

Ամոթ քեզ որ այսքան ժամանակ քնար,
Ինձ դրիր բանտ՝ ոչ սպանար ոչ հանար.
Քո այդ վատութիւնը քեզ էլ չի մնար,
Ձրկեցիր ինձ հայրենիքից և տանից։

Օտար տեղ էլ դու միշտ սև արիր օրս,
Մաս-մաս կանէի քեզ, թէ պատէր զօրս,
Անիրաւ ճմտանք, գոնէ խղճա եղբօրս,
Ո՛չ խեր տեսնես դու ահեղ դատաստանից։

Շատ մարդկանց ծանօթ ես, գիտեն անունդ,
Եթէ տեղդ գտնեն, կը քանդեն տունդ,
Խաչպանեանցս ասում եմ բնութիւնդ,
Հոգ չէ, թէկուզ նեղանաս էլ ինձանից։

(Նամակ իմ սիրելի հայր Յարութիւն Խաչպանեանցին, Սադիան գիւղի տանուտէր)

Ախ քանի խօսքս գրում եմ կարճարօտ,
Մի վախենար հայր իմ կը ջնամ կը գամ.
Մնացել եմ քեզ ու հայրենիքիս կարօտ,
Քիչ տկար եմ, թէ առողջանամ կը գամ։

Հասցէ նամակս իմ հարազատ եղբօրս,
Կարդա՛, մխիթարէ իմ ծերուկ հօրս.
Ինձանից շատ բարև քոյրերիս, մօրս,
Ձեր որպիսութիւնն թէ իմանամ, կը գամ։

Այս լոպէիս ես անկողնում պարկած եմ,
Թելագարի պէս՝ ձեռ ու ոտս պար կածեմ.
Թէ ժողովեմ այս ցաւն մի պարկ ածեմ,
Աստուծով անկողնից վեր կենամ, կը գամ։

Սրտով ցանկանում եմ քո ձեռն պագնեմ,
Ուրախ լեր հայր, ես քո պարծանք ու թագն եմ.
Անկողնից վեր կենամ շորերս հագնեմ,
Թէ ինձ առողջ տեսնեմ՝ ուրախանամ, կը գամ։

Դիշեր ցերեկ մահը իմ առաջին էր,
Նոր ցաւեր ստացայ, մոռացայ հիներ.
Անկարելի բան է, այդ պէտք է լինէր.
Այս ցաւերից եթէ աչք բանամ, կը գամ։

Ցուսով եմ դեռ հոգիս չառած հոգեհան,
Էլ յետ արժանանամ ես մտնեմ Սաղիան.
Այնտեղ պիտի թողնեմ իմ վերջին նշան,
Միայն ուրախանամ, լիանամ կը գամ։

Իմ նամակիս մի պատասխան գրեցէք,
Մէկ ուրախ լուր, կամ մի նոր բան գրեցէք,
Սերտ բարեկամք ինչպէս որ կան. գրեցէք,
Ձեզանից մէկ նամակ ստանամ, կը գամ։

Խնդրում եմ միամտութեան մասին,
Որպիսութիւն գրեցէք մեր տան մասին,
Ես էլ շուտով կամ զատկին, կամ պասին,
Սուրբ Յարութեան թէ արժանանամ կը գամ։

Հօրեղբօրս որդի Ներսէսին ևս,
Զմոռանաք յիշել իմ շատ բարևս.
Աչք որ սաստիկ հիւանդ եմ դեռ ևս,
Այս ցաւովը թէ չմահանամ կը գամ։

Թէ գրելու լինեմ, ցաւերս շատ են,
Գործերս ողջ թերի և անհատատ են.
Բժիշկք եթէ ինձ այս ցաւից ազատեն,
Ուժ ստանամ մի քիչ զօրանամ, կը գամ։

Հազար ինն հարիւր՝ ամիսն յուլիս,
Նամակս գրեցի ի քաղաքն Թիֆլիս,
Բարի ճանապարհն բացուի առաջիս,
Մինչև գարուն եթէ ողջ մնամ, կը գամ։

Մնամ նուաստ ծառայ քո որդի Ղևանդ,
Իմ հայրիկիս միշտ խոնարհ և հնազանդ.
Քո կարօտով մնում եմ պառկած հիւանդ,
Աղօթիր բժշկուեմ, լաւանամ՝ կը գամ։

* * *

Սեղծել է Հայ ինձ Աստուած,
Մեղաւոր եմ վա՛յ ինձ Աստուած.
Այս դարդն տանել չեմ կարող.
Շուտով մի մահ տայ ինձ Աստուած։

Ցաւով լի հազա՛ր ջանս,
Մահուան է յօժար ջանս.
Տէր իմ, կամ կեանք պարգևէր,
Կամ թէ շուտով առ ջանս։

Ղ Օ Շ Մ Ա Ց.

Ստեղծողից յուսով խնդրում եմ մի բան,
Ցոյս ունեմ խնդիրքս չմնայ անկատար.
Հոգս ու ցաւի ձեռից դառել եմ անբան,
Ցուսամ որ Աստուած կտայ ինձ դադար։

Դիշեր ցերեկ նեղութիւն ու տանջանքը,
Կէս են արել ու մաշել են իմ կեանքը.
Ցոյս ունեմ որ լսի իմ աղաչանքը՝
Նա՝ օր միայն ողորմած է և արդար։

Նա է միայն մեղաւորաց ներողը,
Նրանց սրտին ուրախութիւն բերողը.
Նրան յոյս կապողն ու համբերողը,
Մինչև վերջը չի մնալ անմխիթար։

Սիրտս լի ցաւերով մէկը միւսից վատ,
Զարչարում են ինձի և տանջում են շատ,
Ո՞վ մարդասէր Փրկիչ՝ աշխարհիս մի հատ,
Խեղճ Ղևոնդիս ցաւին հասցրու մէկ ճար։

Ե Ր Գ.

Ամեն անգամ երբ յիշեմ իմ երկիրը,
Հառաչելով պիտի ՝ֆ քաշեմ լացեմ.
Եւ երգելով իմ սրտաշարժ երգերը,
Աղի արտասուքով աչքերս թացեմ։

Մտածում եմ, հառաչանքներ արձակում,
Արդեօք կլինի ինձ պէս անբաղդ արարած,

Թռչունի պէս փակուած տխուր վանդակում,
Խոնաւ ու մութ բանտի մէջ եմ բանտարկուած։

Տանջում է ինձի միշտ իմ խղճմտանքը,
Մի վայրկեան գոնէ չէ տալիս դադար,
Խաւարում է օրս, մթնում իմ կեանքը,
Ա՜խ եմ քաշում և հառաչում անդադար։

Դառն արտասուքը խեղդում է ինձի,
Վայր ձգում ցաւագար հիւանդի նման.
Ցաւն զօրանալով՝ յաղթում է ինձի,
Արդեօք կմ՞ի մի օտար Ղևոնդի նման։

ՔԱՐԱՄԻ (Կամ դօշմայ)

Եմ պարտիզում որ անկեցի շատ ծառեր,
Զտեսայ նրանից ես մի բար անդամ,
Ում նուշ տուի, տուաւ ինձ քիրանք, քարեր,
Որ ինձնից չէր լսել մէկ յիմար անդամ։

Տեսրակ ուզողին տուի և իմ դրքերը,
Կարեացս չափ դարմանեցի վէրքերը.
Լուանալով ինձնից նա իւր ձեռքերը,
Ցոյց չտուեց ինձ մի՝ դրչածայր անդամ։

Այնպէս մարդուց կրեցի ես ՁԼասը,
Որից չինայեցի իմ բաժին մասը.
Որն որ ինձանից ամենապակասը,
Լաւութիւն էր տեսել մի հաղար անդամ։

ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ

Անունս Ղևոնդ է ես Շիրվանեցի,
Եօթը տարի օտար երկրում բանեցի.
Ում պարտիզում վարդ, մանուշակ ցանեցի,
Տեղն՝ չտեսայ մի սուսամբար անգամ։

ԱՋՔԻ ԼՈՅՍ.

Աչքի լոյս, ասեցի քեզ՝ իմ արած ջանքը,
Էս եմ անում, էս եմ անում, էս,
Ասեցի և քո մասին իմ քաղցր կեանքը՝
Կէս եմ անում, կէս եմ անում կէս։

Քանի անգամ քեզ նամակներ գրեցի,
Փորձանքներից քեզ զգուշացրեցի.
Անուն ու պատիւդ բարձրացրեցի,
Չես իմանում, չես իմանում, չես։

Մարդկերանցով լիքն է երկիրը, աշխարհ լայն,
Աժենքն իրանց համար, ես ինչ կանեմ այն.
Ողջակէզ և մատաղ իմ անձս միայն՝
Քեզ եմ անում, քեզ եմ անում քեզ։

Խաւարեցրիր դու իմ կարմիր արևը.
Ամօթալի թողիր մարդկանց առջևը.
Կարմիրը դուրս՝ քեզի համար ես սևը՝
Ներս եմ անում, ներս եմ ներս։

Զլնայելով ես քեզանից իմ անձս,
Զոհեցի, փչացրի նաև իմ դանձս.
Իմացիր այս բանը՝ ես Խաչպանեացս՝
Ես եմ անում, ես եմ անում ես։

ԴՈՒԲԷԻԴ.

Աղոր արարած աշխարհի՝
Լոյսն արևելքէն կը ծագէ,
Սիրան շատ բաներ կը խորհի,
Բուն բանը խելքէն կը ծագէ։

Մաքի յոյժ ազատութիւնը,
Կընդարձակէ գիտութիւնը.
Բնական վարդապետութիւնը՝
Մարդու սուր մտքէն կը ծագէ։

Ով պահէ նախնեաց սուրբ վարքը,
Նա կը մտնէ մարդկանց շարքը.
Մարդուս պատիւն ու փառքը,
Իրա սուրբ վարքէն կը ծագէ։

Հոգւով անբիծ անարատը,
Կընդունէ հարանց խրատը.
Բարի գործոց բուն արմատը՝
Ղևոնդ, սուրբ դրքէն կը ծագէ։

ՍԻՐՈՑ ԵՐԳ.

Է կը սիրես դու քո եղբօր արևը,
Արի ինձ մի տանջիր, ով նազելի կոյս.
Մի կորիր մեր քաղցր սիրոյ բարևը,
Քեզ եմ ապաւինել իմ կեանք և իմ յոյս,
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։

Քո սիրովը իմ սիրտս էլ վառուեցաւ,
Կրակ ընկաւ սրտիս մէջն այրուեցաւ.

Ուշ ու միտքս, խելքս գլխէս տարուեցաւ.
Իմ ցաւիս ճար անէ միայն Տէր Յիսուս,
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։

Քո անունդ տետրակիս մէջ գրել եմ,
Քաղցր կեանքս սիրոյդ ճամփին գրել եմ,
Ամեն տեղից սիրտ ու յոյս կորել եմ,
Միայն քեզնով պէտք է տեսնեմ ես էլ լոյս,
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։

Արի մանենք մենք մարդկութեան ասպարէզ,
Գնանք ման գանք կանաչ խոտեր ու պարտէզ.
Հագել ես նուրբ դեղին ծիրանի բեհէզ
Կը խնդրեմ ինձանից չտաս խաբս ու խոյս,
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։

Քո սէրն ինձ արաւ քեզի հպատակ,
Յուսամ քեզնով կատարուի իմ նպատակ,
Վաղ մի սպանիր ինձ անիր նահատակ,
Անմուրազ մի թաղիր ինձ խեղճ եղկելոյս
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։

Ծնեալ տեղս է Շիրվան, անունս Ղևոնդ,
Քո սիրովը զարկուած, պառկած եմ հիւանդ.
Թէ դաս ինձ տեսութեան, լինես հնազանդ,
Կընդունեմ քեզ ինչպէս իմ զոյգ աչքի լոյս,
Ով իմ հոտով ծաղիկ և անթառամ բոյս։

—⁂—

*
* *

Յոթը տարի անձիս չեմ ընդունել շահ,
Ընդունէի ես էլ փող կունենայի.
Ոչ զրկել եմ, և ոչ ձեացել ադահ,
Չեմ ծառայել փողի և մամոնայի։

Ով բաած է ճշմարտութեան արմատից,
Կը հանէ մաս բաժին քչից կամ շատից,
Ունեցածը խեղճերից և աղքատից,
Նա ոչ կը թագցնի, ոչ կը խնայի։

Բարի գործերի մէջ սէր ունենալը,
Չէ միայն սպիտակ հեր ունենալը.
Ողորմած սիրտ՝ առատ ձեռ ունենալը,
Ոչ մեծի կը նայի, ոչ երեխայի։

Բարեհոգի մարդն միշտ ողորմած է,
Որտեղ մի խեղճ տեսնէ սիրտն կը լացէ.
Կը խղճայ. իւր՝ առատ ձեռն կը բացէ,
Կուրախացնէ սիրտն, նաև կը շահի։

Ղևոնդ, կուզես ժլատ մարդուց հարցնել,
Չի լինիլ նրան ուղիղ ճամբու դարձնել.
Նա գիտէ իւր սիրտն կծկիլ քարցնել,
Ոչ խեղճ կը ճանաչի և ոչ կը նայի։

ՊԱՆԴԽՏԻ ԿԵԱՆՔԻՑ.

Ով սիրելիք ոչ ոք պանդուխտ չլինի,
Սիրտ կը քանդէ հառաչանքն պանդխտի.
Դիշեր ցերեկ տխուր տրտում կը լինի,
Կը տանջուի, կմաշուի կեանքն պանդխտի։

Պանդուխտը ուր դիմէ մի տեղ չի գտնիլ,
Ոչ մի բան իւր ուզած համեղ չի գտնիլ.
Իւր վերքերին դարման ու դեղ չի գտնիլ.
Զուր տեղը կանցնի ջանքն պանդխտի։

Անշէջ է պանդխտի ցաւ ու կրակը,
Հայրենիքի հողն է միակ վափաղը.
Ցիշելով իրա ուխտ ու նպատակը,
Կը տանջէ միշտ խղճմտանքն պանդխտի։

Պանդխտի շարժումնքը կամաց կը լինի,
Սիրտը բարակ, և ձեռքը բաց կը լինի.
Ա՜խ կը քաշէ և խոկոյն լաց կը լինի,
Կարճ կը լինի համբերանքն պանդխտի։

Կերած հացը ցամաք ու չոր կը լինի,
Խմած ջուրը անհամ և շոր կը լինի.
Սիրտն լիքը, աչքն պղտոր կը լինի,
Երկինք կէնէ աղերսանքն պանդխտի։

Եղբայր չունի, գնա սիրտը բաց անի,
Սրտի ցաւը եղբօրը խմաց անի.
Ամբողջ օրը կուզէ սուգ ու լաց անի,
Սուգ ու լացն է զբօսանքն պանդխտի։

Նաւվք կը կարդայ օտարութեան վերայ,
Նայելով ապրուստի՝ դրութեան վերայ.
Կը մտածէ միշտ հայրենեաց, տան վերայ,
Զուր կը կորի աշխատանքն պանդխտի։

Կը հառաչի, կը արտասուի կը լացի,
Անկողինը արտասուքով կը թացի.
Ո՞ւմ գնայ աղաչի, ո՞ւմ դուռը բացի,
Ո՞վ կը լսի աղաչանքն պանդխտի։

Հիւանդանայ վրէն կը ծածկեն դուռը,
Դռնովը չեն մտնիլ ծնողքը, քոյրը.
Սրտով կը ցանկանայ եղբօր համբոյրը,
Շատ դժուար է հանգամանքն պանդխտի։

Մէկը չի լինի գնա հարցնի հալը,
Դիշեր ցերեկ հառաչանքն ու լալը.
Սև քարից դուրս կը գայ բախտ ու իղձալը,
Չի վերջանալ տառապանքն պանդխտի։

Թէ մեռնի՝ մայր չունի անէ լաց ու սուգ,
Քոյր չկայ որ վրէն թափէ արտասուք,
Եղբայր չկայ դագաղին տայ զարդ ու զուգ,
Անհնչան է գերեզմանքն՝ պանդխտի։

Ա՜խ, պանդխտութիւնը շատ դժուար բան է,
Հայրենիքը քաղցր հանգստարան է.
Ղևոնդ խնդրիր Տէրից որ մի ճար անէ,
Էլ երկար չքաշես կեանքն պանդխտի։

Ա. Յ. ՔԵՉ ՕՐԻՆԱԿ.

(Դօշամնայ)

Ինհասկացող մարդուն թէ անես պատիւ,
Եւ գլխին էլ դնես գոհարազարդ թագ,
Կամ դափնեայ պսակ,
Շուտով ինքն իրան կանի անպատիւ.
Եւ գլխի պսակն էլ կտայ ոտի տակ.
Կը մնայ անդգակ։

Նա չի ջոկում արդէն իրա լաւն ու վատ,
Եւ չի էլ հասկանալ լաւ խօսք ու խրատ.
Ինչպէս քարէ արձան, կամ անզգայ պատ,
Չի լսի խօսքերիդ անթիւ անքանակ,
Ոչ մի ժամանակ։

Ով նրան ընդունի մարդու տեղ դնի,
Ցաւ ու դարդին դարման անի դեղ դնի,

Պիտի նա յետ դառնայ վրէն մեղ դնի,
Խօսի դառը, թթու, անհամ անտեղեակ,
Եւ բոլորովին խակ։

Թէ նրան շատ պատուես, լաւութիւն անես,
Ձեռքից բռնես դառը վիճակից հանես,
Այնպէս կանէ դու ինքդ կը փոշմանես,
Եւ կտաս քո գլխիդ՝ երեսիդ ապտակ,
Երկար ու բարակ։

Թէ բերես նրան տաս քաղցր մեղր ու իւղ,
Կը կարծէ իրանից կրում ես երկիւղ.
Ոտն կդնի առաջ անվախ, աներկիւղ,
Կը կանգնի քո դիմաց՝ հպարտ, համարձակ,
Կը խօսի դարտակ։

Նրա լեզուն դառը սոխ ու սխտոր է,
Իսկոյն մարդու արիւնն կը պղտորէ.
Լաւութեան տեղ ստիդ տակը կը փորէ,
Յետ կդառնայ կը կանգնի քեզ հակառակ.
Կանի խայտառակ։

Արած լաւութիւնդ նա կը կորցնի,
Բաւական չէ՝ էլի քեզ հետ գործ ունի,
Ուրախութիւնդ տխրութեան կը դարձնի,
Կը խանգարէ քո գործերն շարունակ,
Ճիշտ ու անկատակ։

Այդպէս մարդը չի ճանաչիլ իւր ծէրին,
Կը անպատուէ մեծին, փոքրին և ծերին.
Կը հայհոյէ ծնողաց և իւր մեծերին,
Կը մոռանայ իւր ազգանուն, յիշատակ,
Նաև հօր կտակ։

Թէ ընկար նրա հետ բնութիւնն տեսար,
Նոյն ժամին կլինես նրանից բեզար,
Թէ լաւութիւն անես օրէն մի հազար.
Նեղ օրերում քեզի կը թողնէ մենակ,
Սենեակումդ փակ։

Նա ինքն էլ չի իմանալ իւր դարդը,
Նրա համար միշտ սարքուկ է թակարդը.
Չի հասկանալ սոխակ, չի ջոկիլ վարդը,
Չի ունենալ սրտում ոչ ուխտ, ոչ փափագ,
Եւ ոչ նպատակ։

Ով որ մի տեղ նրա հետ ընկերանայ,
Շատ յաւերի վշտերի կը տիրանայ.
Դեռ իւր մատաղ կեանքում չուտ կծերանայ,
Մազերն կդառնայ ձիւնի պէս սպիտակ,
Բոլորովին ճերմակ։

Մի մարդու՝ որ ընկերն լաւ ընկեր չէ,
Արդէն նրա համար աշխարհը վերջ է.
Այս կեանքումը նա վառ դժոխքի մէջ է,
Որովհետև ընկեր ունի անառակ,
Ընկել է կրակ։

Այդպէս մարդը մարդկութեան միշտ անհաս է,
Մարդկային ազգութեան դա միշտ ինաս է.
Դառնախօս է, լաւ խօսալուց միշտ պաս է,
Պիտի դառնայ վերջն գող և աւազակ,
Ազգին հակառակ։

Ոչ բան հասկացող է և ոչ յիմար է,
Մարմնի աչքերն վառ՝ մտքով խաւար է.
Վերջապէս չգիտեմ մարդ թէ տաւար է,
Նրա համար ողջ մէկ է կամ սեր կամ կարագ,
Կամ խոտ հասարակ։

Գիշեր, ցերեկ, երեկոյ և առաւօտ,
Չէ խրատուել և մեծացել մարդու մօտ,
Զունի ոչ մարդկութիւն, ոչ մարդկութեան հոտ,
Անզգայ է, չի զգալ վարդ, մանուշակ,
Սիրահար սոխակ։

Երբ նա իւր վատ արարմունքն տարած է,
Ինքն իւր գլխին ամեն բան կատարած է.
Պատճառն շատ անիրաւութիւն արած է,
Եթէ չապաշխարէ, վայր կընկնի յատակ,
Կը մնայ ոտքի տակ։

Ինչ մարդ որ չպահէ իրա պատիւը,
Չի պակսիլ նրանից դաւ ու կռիւը.
Մի օր կը վերջանայ նորա հաշիւը,
Գլխին կկոտրուի գաւազան, մահակ,
Եւ կուտի չատ թակ։

Վերջն ամեն տեղից կը կտրուի ոտն,
Ընկեր և հարևան չեն գնալ մօտն.
Կը տարածէ իւր վատ գարշելի հոտն,
Մի օր էլ ինքն իրան կը խփէ դանակ,
Եւ կլինի սատակ։

Մարդկանց միջին՝ մարդկութիւնը մարդն ունի,
Ծաղկանց միջին՝ անուշ հոտը վարդն ունի.
Ամեն մարդ իւր բնութիւնն ու դարդն ունի,
Արարած աշխարհը լայն և ընդարձակ,
Մարդիկ կան տեսակ-տեսակ։

Վատ մարդուն փորձով կարող ես ճանաչիլ.
Նա Տերից չի վախիլ, մարդուց ամաչիլ.
Մի համարձակուիր նրան՝ նեղ օրում կանչիլ,
Կը դայ կդարձնէ քեզ՝ իրան հպատակ,
Կանի նահատակ։

Քո թանդ կեանքդ էժան գնով մի ծախիր,
Այդպիսիներից հեռու կենալ յաճախիր.
Անհասկացող մարդուց հեռացիր փախիր,
Թէ չէ ասում եմ քեզ՝ ճիշտն ու շիտակ,
Կը դառնաս առակ։

Ղևոնդ, հերիք կարդաս դու քարոզ ու ճառ,
Հասկացողն կը հասկանայ անպատճառ.
Անհասկացող մարդուն թէ ասես էլ հազար.
Էլի պէտք է քշէ իւր էշ ուանակ,
Ամեն ժամանակ։

ԱՆՆՄԱՆ ԱՂՋԻԿ.

Անման աղջիկ, աչքդ լոյս,
Այսօր քեզ նշան են արել.
Ուրախացիր, ով սիրուն կոյս,
Բաղչադ գիւլիշան են արել։

Ուզած բանդ կատարել են,
Եկող գացողք դադարել են.
Տուն ու տեղդ զարդարել են,
Պատդ զարնիշան են արել։

Մի վախիր չի կորչիլ ջանքդ,
Պիտի լաւ անցկացնես կեանքդ.
Տարածել են գովասանքդ.
Մինչև Հինդստան են արել։

Վրադ ունիս ակունք խալիս,
Բարեկամք ընծայ են տալիս.
Խնամիքդ գնում գալիս՝
Ձեր տունը մեյդան են արել։

Անունդ ասեմ Վարդուհի,
Իսկ ծագումով Իշխանուհի.
Շուտով կդառնաս Թագուհի,
Քեզի աննման են արել։

Նշանդ շնորհաւոր լինի,
Ուղածդ բախտաւոր լինի.
Ղևոնդն քեզ քաւոր լինի,
Ինձի պարտական են արել։

ՄՈՒԽԱՄՄԱԶ

Երբ մեկ դարդս հարցրու, տուր դարդիս դարման սիրական,
Քո շափաղ երեսդ տեսնել՝ արա ինձ արժան սիրական,
Էլ չի լինիլ աշխարհումս քեզ պէս անուշ բան սիրական,
Կամ ինձնից նշան վերցրու, կամ տուր ինձ նշան սիրական,
Ես չեմ տեսել իմ կեանքումս էլ մի քեզ նման սիրական,
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան սիրական։

Բոյդ բարձր, մէջքդ բարակ, ինքդ տասնհինգ տարեկան ես,
Կուզեմ մի դաս հետս խօսես. թէ որ հաստատ սիրական ես,
Դու հոտով վարդ ու մանուշակ, շուշան, մեխակ ըէյհան ես,
Բաւական է ինձ չարչարես, տանջես մաշես, հոգիս հանես,
Ջանս չես առնում մի անգամ, դնում դերեզման սիրական,
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան սիրական։

Դու լուսին ու արեգակ ես՝ ողջ աշխարհին լոյս ես տալիս,
Սէրդ սրտումս կաթել է, ինձ ամեն օր յոյս ես տալիս,
Երբեմն վարդ ու մանուշակ, ինձ անթառամ յոյս ես տալիս,
Երբեմն էլ խաբ-խաբելով, ինձնից խաբս ու խոյս ես տալիս.

Վերջապէս չես տալիս ինձ մէկ՝ հաստատ պատասխան սիրական,
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան սիրական։

Դու թէ չլինես, ես կը մեռնեմ, հաստատ պահապանս դու ես,
Թէ չլինէիր, շատ կապրէի. հաստատ հոգեհանս դու ես.
Բժիշկն ինձ հարկաւոր չէ, իմ դեղ ու դարմանս դու ես,
Ահա երբ կը լինի աչքս բանամ՝ տեսնեմ որ իմ տանս դու ես.
Քո վառ կրակով այրում ես՝ ինձի յաւիտեան սիրական,
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան սիրական։

Սիրուն օրիորդների միջին, գեղեցկութեամբ դու մի հատ ես,
Անուանդ ոսկի, ինքդ ոսկի, քեզ ով կասէ թէ աղքատ ես.
Գեղեցկութեանդ համեմատ՝ եթէ խօսքիդ էլ հաստատ ես,
Արդարների աղօթքովը ամեն փորձանքից ազատ ես,
Ղևոնդս այս օտար երկրում՝ չունիմ ազգական սիրական,
Մորթում ես ինձի անդանակ, թողնում անկենդան սիրական։

ՄԻՇՏ ՊԱՐՏ ԵՍ

Միշտ պարտ ես աղօթել դու քո Տիրոջդ,
Որ պահէ քեզ ամեն փորձանքից ազատ.
Թէ կուզես դուրդ գալ եղբօր ու քրոջդ,
Պատուիր ծնողներիդ դու միշտ հարազատ։

Միշտ քո ծնողացդ դու պատուել ես պարտ,
Նոցա հնազանդուիր, մի լինիր հպարտ.

Թէ կուզես լինել դու՝ ճիշտ կատարեալ մարդ,
Բարի և լաւ մարդկանց եղիր հնազանդ։

Միշտ պարտ ես լաւ մարդկանց հնազանդ մնալ,
Սիրել, պատուել նոցա՝ հարազատ մնալ,
Թէ կուզես փորձանքից դու ազատ մնալ,
Աղօթիր Տիրոջը՝ սրտով ջերմեռանդ։

Միշտ պարտ ես ջերմեռանդ Տիրոջը կանչել,
Աղօթել, խնդրել Նրան՝ և միշտ աղաչել.
Թէ կուզես պտուղ տալ ծաղկիլ, կանաչել,
Ունեցիր խղճմտանք, սէր, նաև եռանդ։

Միշտ պարտ ես ունենալ դութ ու խղճմտանք,
Լսել լաւ խրատներ, պահել պատուիրանք.
Թէ կուզես տեսնել լաւ օրեր, ուրախ կեանք,
Շահիր սրտեր. տխուր, տրտում և հիւանդ։

Միշտ պարտ ես մխիթարել սրտերն տխուր,
Զթողնել որբի և խեղճի վիզն ծուռ.
Թէ կուզես ողորմի տանել, դու էլ ողորմի տուր,
Մի բերան էլ ինձ ասիր՝ ողորմի քեզ Ղևանդ։

ԿՌՈՒՆԿՆԵՐ.

Դրամ-երամ երկնքումն թռչում էք,
Շարուել էք կարգերով դասաւ կռունկներ.
Մեղմ ու բարակ եղանակով երգում էք,
Ձեր ձայնն ականջիս՝ հասաւ, կռունկներ։

Կացէք, պատմեմ ձեզի իմ դարդ ու սարը,
Գուցէ դուք հասցնէք իմ ցաւիս ճարը.

Զորանում է կենացս կանաչ ծառը,
Վարդ ծաղիկս թառամեցաւ, կռունկներ։

Կռունկք, օտար երկրում հալուաւ ոսկորս,
Գիշերուանից մութ ու սև անցաւ օրս.
Կացէք, մի նամակ տամ տարէք իմ հօրս,
Ասէք՝ պանդուխտ որդիդ տուաւ, կռունկներ։

Քոյրերս ինձ սպասելով մնացին,
Ամեն օր, եղբայր, ասելով մնացին.
Ծնողներս արտասուելով մնացին,
Մտածելով կեանքս մաշուաւ, կռունկներ։

Կեանքիս թելը բարակել է մաշուելով,
Լեարդ ու թոքերս այրուել է խաշուելով.
Սիրտս փթեց սև օրերս հաշուելով,
Ժամանակս չլրացաւ, կռունկներ։

Հայրենիքից զրկուած օտար մնացի,
Ծնողացս կարօտով տկար մնացի.
Հոգս ու ցաւով լի, ապիկար մնացի,
Ասէք, որդիդ՝ այսպէս ասաւ, կռունկներ։

Կարօտում եմ իմ եղբայր Թադէոսին,
Աչքերիցս արիւն-արցունք կհոսին.
Շատ խնդրեցի, աղաչեցի սուրբ Կուսին,
Բայց խնդիրքս չատ ուշացաւ, կռունկներ։

Սև սրտիս պէս՝ ես էլ հագել եմ սևեր,
Շուտ տեղ հասէք, արագ շարժէք ձեր թևեր.
Նստած կապասեմ ձեզ՝ աչքս դէպի վեր,
Ամեն կողմից ճամփէս կապուաւ, կռունկներ։

Ունիք թևեր լայնատարած ու արձակ,
Թռէք դէպի Աղդաշ ուրախ՝ համարձակ.

Այնտեղ է Խաչատուր [1]) եղբայրս դերձակ,
Ասէք՝ եղբայրդ շատ լացաւ, կռունկներ։

Կռունկք, կը սիրէք ձեր արդարութիւնը,
Գնացէք պատմեցէք իմ դրութիւնը.
Անտանելի ցաւ է օտարութիւնը,
Իմ ճակատիս այսպէս դրուաւ, կռունկներ։

Կռունկք, թռէք անցէք Շամախի Շիրվան,
Ինձնից բարև տարէք ի գիւղն Սաղիան.
Խեղճ Ղևոնդն եմ, աղքանունս Խաչպանեան,
Ասէք, ինքը մեզ հետ խօսաւ կռունկներ.

*
* *

չխարհումս ես ամբարիշտ՝
Եւ չար մարդու հետ բան չունեմ
Եւ կուզեմ հեռու կենալ միշտ,
Ինքն անհաշտ, արծաթապաշտ,
Կռուարար մարդու հետ բան չունեմ։

Չեմ լինիլ կռուարար խարդախ,
Խօսքերս կասեմ ես անվախ,
Եւ կերդեմ զուարթ ուրախ,
Շուտ-շուտ տխրող, և շատ քթիրող,
Տխմար մարդու հետ բան չունեմ։

1) Հօրեղբօրս որդին է անբաժան ինչպէս հարազատ եղբայր։

Խօսքը լսող բայց խուլացող,
Բանից վախեցող ծուլացող,
Դեռ չբանած շուտ թուլացող,
Մարմնով ամբողջ, ողջ և առողջ,
Թշուառ մարդու հետ բան չունեմ։

Իրան միշտ գիտուն համարող,
Իւր ժամանակին անկարող,
Լեղուոքիս շատ բան կատարող,
Ինքնահաւան, ինքն անբան,
Խաւար մարդու հետ բան չունեմ։

Ինքն գրող և կարդացող,
Ամեն բան խօսող իմացող,
Իզուր բղաւող, բարկացող,
Տուող խրատ, ինքն պրատ,
Շուար մարդու հետ բան չունեմ։

Հասակն անցրած կամ ծեր,
Վատ-վատ ճանապարհների տէր,
Թէ լինի իմ եղբայր կամ հեր,
Խրատ տուող, իրան անպատուող,
Սիրահար մարդու հետ բան չունեմ։

Ունիմք մէկ Հայր անմահ անծին.
Եւ Սուրբ Որդի Հոր՝ միածին,
Ծառայ եմ Հոգւոյն բղխածին,
Երեք անձինք, Աստուած մէկ Ինք,
Հաղար մարդու հետ բան չունեմ։

Ղևոնդ բաւ է, հերիք մեկնես,
Ոտդ պէտք է չափով մեկնես,
Դու էլ տգէտներից մէկն ես,
Շատ խօսող, և շատ բամբասող.
Արդար մարդու հետ բան չունեմ։

ԼՍԻՐ ՈՐԴԵԱԿ.

Լսիր որդեակ, քեզ մի կարճարօտ խրատ,
Միայն մտածիր դու՝ և լաւ հասկացիր.
Թէ պահես, օրհնութիւն կընդունես վրադ,
Այս խօսքերէն երբէք դու մի կասկածիր։

Երբ մեծացար սկսար քեզ ճանաչել,
Պարտ ես Տէրից վախել մարդուց ամաչել.
Թէ ուզում ես բուսնել, ծաղկիլ, կանաչել,
Լսիր խրատ, և սուրբ դրքեր կարդացիր։

Բռնիր ճանապարհի ճիշտը՝ ուղիղը,
Անդ կը գտնես բարի մարդկանց շաւիղը.
Մաքուտդ պահելով Տիրոջ երկիւղը,
Հաստատիր քայլերդ, էլ մի ուշացիր։

Երբ ընտրեցիր ճանապարհի հաստատը,
Այնժամ գիտեմ ընդունել ես խրատը.
Էլ քեզ չի հարկաւոր ուրիշը, շատը,
Միայն մի Տէր և ստեղծող իմացիր։

Սիրելիս, ես պարտ եմ այս էլ քեզ ասել,
Որ քեզ պէտք չէ՝ վատ ընկերների լսել.
Թէ կը սիրես նրանց հետ գործ սկսել,
Իմանաս որ ուղիղ ճամբադ կորուցիր։

Ընկերդ թէ հարուստ կամ աղքատ լինի,
Այնպէս արա, քեզի համեմատ լինի.
Լաւ ծնողաց որդի, լաւ արմատ լինի,
Մի նայիր, նրա հետ դու ընկերացիր։

Լաւ մարդկանց հետ դու միշտ նիստ ու կաց արա,
Թէ լաց լինեն, դու էլ աչքդ թաց արա,

Երբ որ ուրախանան, սիրտդ բաց արա,
Առաջուայ սուգ ու լաց շուտով մոռացիր։

Ոչ ոքի մօտ խօսքդ մի երկարացնիլ,
Աշխատիր խօսք լսել և ուշ դարձնիլ,
Թէ մէկը քեզանից խօսք չի հարցնիլ,
Զուր տեղը մի խօսիր, բերան մի բացիր։

Ատած խօսքդ լաւ մտածիր, լաւ միտ առ,
Ուրիշների գլխին երբէք ցաւ մի դառ.
Քո գլուխը ուրիշին գրաւ մի տար,
Միշտ աչքաբաց եղիր և զգուշացիր։

Ղևոնդ բաւ է, հերիք է կարդաս խրատ,
Դանակը դանակ է. մկրատը՝ մկրատ.
Անառակ որդին չի դառնալ անարատ,
Լաւն էն է, լաւիր ու անձէն կացիր։

ԱՂՕԹՔ

Ով Թագաւորաց Թագաւոր, և Դու տերանց Տէր
իմ Աստուած,
Ստեղծող, Արարիչ, արդար, սուրբ և լոյս պատկեր,
իմ Աստուած,
Լսիր մեր անարժան ձայնին, ունիմք հառաչանքներ,
իմ Աստուած,
Մեր սիրտն անմխիթար մի թող՝ ուրախութիւն բեր,
իմ Աստուած,
Փրկիչն մեզ կը քարոզէ հաւատ, յոյս և սէր,
իմ Աստուած,
Հաւատով յոյսով խնդրում ենք, սիրով մեզի ներիր,
Աստուած։

Արարածոց Արարիչը՝ մարդկանց ստեղծողը Դու ես,
Երկիրն ոտացդ տակն է՝ երկնքում կենողը Դու ես,
Երկնքիցը ողջ արարած՝ աշխարհին նայողը Դու ես.
Ճշմարիտ դատաստան անող՝ և արդար դատողը Դու ես,
Կապեալին, հիւանդին խղճող, ցաւից ազատողը Դու ես,
Խղճա ազատիր և մեզի, բաց մեր կապանքներ, իմ Աստուած։

Մենք Քո ձեռացդ գործն ենք, Դու երկինք ու երկրի Տէր ես,
Անսկիզբ ու անվերջ լոյս ես, բարձր երկնքիցն էլ վեր ես,
Զինայեցիր մեզ Քո Որդիդ, Դու անքննին մարդասէր ես,
Քո բազմառատ գթութեամբը՝ խնդրում ենք մեղքներս
ներես,
Հայր, Որդի և Սուրբ Հոգի, նաև հաւատ, յոյս և սէր ես,
Քո ստեղծածիդ միշտ սիրող՝ ողորմացող լեր իմ Աստուած։

Ամեն շնչաւոր արարածք Քեզանով կառավարւում են,
Շատ տխուր և կոտր սրտեր՝ Քեզանով մխիթարւում են,
Ծով, ցամաք, լուսին, արեգակ, աստղերն քեզ
խոնարհւում են,
Քո անունից սարսափելով չարերն հրաժարւում են,
Ամեն բան իր ժամանակին Քո հրամանով կատարւում են,
Պատճառն Դու ես ամէն բան՝ Ստեղծող և Տէր իմ Աստուած։

Ո՛վ Հայր, Որդի, և Սուրբ Հոգի, ամենասուրբ
Երրորդութիւն,
Մի Տէրութիւն և մի Աստուած, երեք անձինք և մի
բնութիւն.
Մի մոռանար կորուստներս, մի ջնջիր հն մեր Հայ անուն,
Մի թողիր զուր տեղը թափուի քո արարածոց անմեղ
արիւն,
Ղևոնդս՝ ես անարժան եմ, թէ խնդրեմ էլ մինչ իրիկուն,
Միջնորդեն վասն մեր՝ առ Քեզ, Քո ամեն սրբեր,
իմ Աստուած։

Ո՛վ մարդ, արի սիրիր դու ճշմարտութիւն,
Եւ քեզի տուր միշտ ուղիղ ճանապարհի.
Ճշմարիտ մարդն ունի միշտ մարդկութիւն,
Եւ հաստատ խօսք՝ ճիշտ ու քաղաքավարի։

Մի լինիր սուտ խաբող, մի լինիր խարդախ,
Ճշմարիտ կաց, դու յաղթող ես և անվախ,
Միշտ գործով աջողակ, և սրտով ուրախ,
Կը լինես շարունակ ամենայն տարի։

Այն մարդն որ ճշմարտութեան սէր ունի,
Նա իւր գլխին հզօր, յաղթող Տէր ունի.
Ճշմարիտ գործոց մէջ, Տիրոջ՝ ձեռ ունի,
Պիտի յաղթի նա միշտ հարիւր հազարի։

Ասած խօսքս եղբայր, թէ լաւ մտածես,
Եւ կատարես՝ ճշմարտութեան մէջ մտած ես.
Մեծ ու փոքրով ձեր ուղածն կտայ ձեզ,
Նա, որ գթած է և ամենաբարի։

Ղևոնդ, ճշմարտութիւնը ամենին յաղթող է,
Ճշմարտի մօտ ստախօսն կը դողէ.
Ինչ մարդ ստախօս է և մարդ խաբող է,
Նա իւր ձեռքով իւր ճրագն կը մարի։

*
* *

Այս կապէք Ինքն միայն մէկ, անուններն հաղար մէկին,
Թէ միշտ Նրան ապաւինէք, Նա չի թողալ խաւար մէկին.
Այս աշխարհը ծաղկունքով ու պտուղներով զարդարողին,
Թէ յուսով հաւատով խնդրէք, չի թողալ և անբար մէկին։

Եղբարք, սուրբ գրքեր կարդացէք, բարի խրատներ սովորէք,
Լաւ բարի սերմեր ցանեցէք, ոգէտներին լուսաւորէք
Ամեն օր զԱստուած յիշելով օրհնեցէք և փառաւորէք,
Թէ սուրբ պատուէրները պահէք, չի թողալ անվախթար մէկին։

Իրար հետ սիրով վարուեցէք, սխալներդ ներող եղէք,
Աղքատներին խղճով նայող, որբերին միշտ սիրող եղէք,
Զքաւոր պարտապաններին՝ մի նեղէք համբերող եղէք,
Խղճմտանքով սիրտ ունեցէք, մի ձեանաք դուք քար մէկին։

Թէ դադար տաք կռիւներին, իրար հետ չկենաք խռով,
Քաղցրութեամբ գործ վարելով, իրար հետ միշտ մնաք սիրով,
Ճանաչէք օրէնք, ճանապարհ, երբէք չպարծենաք զօրով,
Ձեր ցաւին դեղ կտայ Աստուած, նա չի թողալ անճար մէկին։

Որդին հօրը հայհոյում է, եղբայր եղբօր վնասում է,
Աշխարհս մեղքերով լցվում, բարիքներն պակասում է.
Հայրն կուզէ ապաշխարենք, համբերելով սպասում է,
Նայում է իր մարդկանց վերայ, չի գտնում և արդար մէկին։

Ղևոնդ, քննենք Տիրոջ գործը, շատ քաղցր է Նրա սէրը,
Իւր մեծ ողորմութեան համար, մեզ շատ սիրեց փառաց Տէրը.
Մեզ տկարներիս փրկելու և Ինքնելու մեր մեղքերը,
Ղրկեց մարմնացաւ, մարդացաւ, զոհեց Նա մեզ համար Մէկին։

—※※—

ՄԻ ԽՕՍՔ ԱՍԵՄ.

Մի խօսք ասեմ՝ քեզի շատակ իմացիր,
Եւ այս խօսքը դու միշտ պահիր քո մտքում.
Ճշմարիտ, պարզ, մաքուր, խոտակ իմացիր,
Պահիր պատուիրանքը, և կաց օրէնքում։

Այն մարդն որ օրէնքի մէջ չի ծնուում.
Նրա խօսքն մարդկանց մէջ չի ընդունուում,
Պատճառն իւր կեանքում նա չի գտնուում,
Տաճկի ուզարլիկում [1]) կամ հայի խնկում։

Նա որ չար ծնունդ է առել մօրից,
Ապօրինի ծնուել իւր մօր փորից,
Շնորհ չի ընդունիլ նա Տէր-Հօրից,
Երբ որ մկրտում է, սուրբ դրօշմով կնքում։

Նա քանի մեծանայ՝ պէտք է վատանայ,
Չար գործերն, մեղքն, պէտք է շատանայ,
Պատճառն՝ արմատն է չար և սատանայ,
Չի սիրիլ նա մի բարի գործ իւր կեանքում։

Նրա սրտումը չի լինիլ խղճմտանք,
Երեսումը չի ունենալ պատկառանք.

1) Ուզարլիկ խոտ է, որ տաճիկները գործ են ածում խնկի տեղ։

Չի խոնարհուիլ սրբի չի հաւատալ վանք,
Չի դանուիլ եկեղեցում և վանքում։

Երբ մի մարդում լինի չար սերմ, չար արմատ,
Կապականէ մարմինն, չի մնալ մի մատ.
Ամեն մարդ իւր չար գործերի համեմատ,
Միշտ տանջւում է, չարչարւում է և տնքում։

Ով ինչ սերմերը կը սերմէ կամ կը շաղէ,
Նոյն պտուղն կը հնձէ և կը քաղէ.
Քանի ժամանակն չէ անցել վաղ է,
Պէտք է կենալ միշտ արդար աշխատանքում։

Այս բանը ոչ ջրից և ոչ հողից է,
Ոչ աղքատութիւնից և ոչ փողից է.
Այլ անկարգ անկանոն, վատ ծնողից է,
Որ՝ չի կենում Տիրոջ սուրբ պատուիրանքում։

Ծնողը պէտք է իրան միշտ մաքուր պահի,
Ուրիշի դէմ իրա աչքը կոյր պահի.
Ծղայ պահի, աղջիկ պահի, քոյր պահի,
Եւ մաքուր կաթ ունենայ իւր ստինքում։

Չարի սերմանածը չարն էլ կը հնձէ,
Կը թամքէ կնստէ, գլուխն կը սանձէ,
Կը տանէ կրակում կայրէ, կաղանձէ,
Իւր մեղքերն դնելով իւր շլինքում։

Ղևոնդ, բաւ է, այս բաներին կայ քննող,
Աղրանքին համեմատ՝ կայ և դին դնող.
Այստեղ ոչ սուրբ հայր կայ, ոչ մաքուր ծնող,
Մի Սուրբ Հայր կայ, որ կենում է երկնքում։

ՍՈԽԱԿ ԵՄ ՎԱՐԴԻՍ ՄԱՆ ԿՈՒԳԱՄ.

Զայրենիքս հողս ձգած,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ.
Ցուզուած, յոգնած և վաստակած,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Կոտրուաւ իմ վառ կանթեղս,
Այնժամ՝ երբ թողի իմ տեղս.
Արդեօք ե՞րբ կդանեմ դեղս,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Տարեկան հինգ նաւակատիկ,
Անցուցել եմ եօթը դատիկ.
Թողած եղբօրս մի հատիկ,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Շիրվանումն է Սաղիան գեղս,
Սաղիանումն է տուն ու տեղս,
Թողած այնտեղ աղգ ու ցեղս,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Սիրտս տխուր, միտքս մոլոր,
Աչքերիս արտասուք կոլոր.
Ճամբայ դառած աշխարհ բոլոր,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Հոգս ու ցաւից կապել եմ բեռ,
Գնում եմ տեղ՝ չեմ հասել դեռ,
Դարուն տաս, աշուն ձմեռ,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Սիրտս հագած ունի սև սուք,
Մէջն լի արիւն արտասուք,
Չեմ զգում ոչ ցուրտ ու ոչ բուք,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Վարդս տեսել հարցրել եմ,
Աչքիս առջև կորցրել եմ,
Նրա դարդն էլ վերցրել եմ,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Գնա՜ց, ինձի լալով թողեց,
Խեղճ դլխիս վայ տալով թողեց,
Հեռուից ման գալով թողեց,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Սիրտս սուցուց ինչպէս թանաք,
Մորթեց սպանեց անդանակ,
Ամեն օր ամեն ժամանակ
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Ինձ թողեց անբաղդ անսատար,
Ուխտ ու պայմանս անկատար,
Փնտրում եմ ես՝ միշտ, անդադար,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Օրի հետ ես էլ կրմթնեմ,
Գլուխս չոր քարին կդնեմ,
Ա՜խ ի՞րբ պիտի վարդս գտնեմ,
Սոխակ եմ, վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Տէր իմ, խղճա արա աղատ,
Գտնեմ իմ վարդն հարազատ,
Օտար երկրում խեղճ և աղքատ,
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Քանի չէ թառամել խոտը,
Գտնեմ, դնամ վարդիս մօտը.
Մէկ էլ առնեմ անուշ հոտը,
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Մինչև ծաղիկս չը գտնեմ,
Ուխտել եմ աշխարհ չը մտնեմ.
Ունեցածս ողջ կը վատնեմ,
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ.

Իմ վարդն ինձ չինեց առակ,
Դարդ տուեց երկար ու բարակ,
Դարձել եմ որդի անառակ,
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Հայրենիք, իմ աչքի լոյսը,
Օրհնուի քո հողն ու բոյսը,
Կը գամ, չեմ կտրել իմ յոյսը,
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

Ղևոնդս դարդեր ունիմ շատ,
Սիրտս լի մէկը միւսից վատ.
Կորուցել եմ վարդս հաստատ,
Սոխակ եմ վարդիս ման կուգամ,
Դարման՝ իմ դարդիս ման կուգամ։

ՍԻՐՈՒՆ ԿՈՅՍ.

Սիրուն կոյս, այն օրից՝ ինչ տեսել եմ քեզ,
Սիրել եմ, սիրում եմ և պիտի սիրեմ.
Քո մասին զրկանքներ՝ ինչ ասել եմ քեզ,
Կրել եմ, կրում եմ և պիտի կրեմ։

Ինչքան ուրախ անցաւ ինձ համար այն օր,
Երբ հինն հանելով՝ հագել էիր նոր.
Մի հոտով ծաղկէ փունջ քեզ իբր շնորհ
Բերել եմ, բերում եմ և պիտի բերեմ։

Ինքդ հայ օրիորդ՝ անունդ Սանդուխտ,
Զմռռնաս մեր արած այն պայման և ուխտ.
Իմ ձեռքով քեզ՝ այն օրուանից սիրոյ թուղթ՝
Գրել եմ, գրում եմ և պիտի գրեմ։

Դու ինձի ձգել ես հոգս ու ցաւի մէջ,
Հուրդ անհանգչելի՛ կրակդ է անչէջ.
Քո տուած ցաւերին, դարդերին անվերջ
Լռել եմ, լռում եմ և պիտի լռեմ։

Խնդրեմ չաւելացնես ցաւս՝ կրակս,
Ով իմ աղաւնեակս և իմ տատրակս.
Քո սիրոյ կրակով սիրտս՝ ու ճրագս
Վառել եմ, վառում եմ և պիտի վառեմ։

Խնդրեմ ինձ չապանես չը անես մաս-մաս,
Դարդս որ տուել ես, դարմանն էլ տաս.
Դոշիդ լալ ու դոհար՝ ջաւահիր արմաս,
Շարել եմ, շարում եմ և պիտի շարեմ։

Ո՞վ իմ սիրուն քաղցրախօս երգիչս,
Յաւիտեան քեզ հաստատ պահէ Փրկիչս.
Քեզ դովասանք գրելու իմ գրիչս՝
Սրել եմ, սրում եմ և պիտի սրեմ։

Քո սիրոյդ վառուել՝ ես առայ յանձն,
Չեմ սիրում հագուստն, փողն ու գանձն.
Ղևոնդս քո սիրոյ կրակով իմ անձն՝
Էրել եմ, էրում եմ, և պիտի էրեմ։

ԱՆՈՒՇ ՍԻՐԱԿԱՆ.

Չխարհումս չի ճարուի մի քեզ նման գովական՝
Անուշ սիրական,
Ողջ հոտաւէտ ծաղիկներից դու ես ինձի դուրեկան,
Անուշ սիրական,
Քո սէրն ինձ չարչարում է գիշեր ցերեկ միշտ՝
Ունիմ ցաւ ու վիշտ,
Ամեն օր ինձ հալածում է՝ դառել եմ թափառական,
Անուշ սիրական,—
Դու հոտով վարդ, մանուշակ, նունուֆար, րէյհան ես,
Հերիք իմ հոգիս հանես.
Սիրուն անթառամ ծաղիկ ես՝ յաւիտեան ինձ պէտքական,
Անուշ սիրական։
Սիրուն, սպիտակ պատկերդ փայլում է ինչպէս լուսնեակ,
Դու ես արև արուսեակ.

Ինքդ քնքուշ, ձայնդ անուշ, լեզուդ քաղցր Հայկական,
Անուշ սիրական։
Ունքեր ունես կամարաձև, աչքերդ սև սաթի պես,
Թուշդ արինակաթի պես.
Դու նշանակուած ես ինձ համար անուր, սահման պապական,
Անուշ սիրական։—
Քաղցր շաքար երեսիդ մօտ՝ սպիտակ ձիւնն սև է,
Այդ քեզ երկնից պարգև է.
Կը սիրէ քեզ աշխարհական՝ նաև հոգևորական,
Անուշ սիրական։
Չի գտնուիլ քո հատը՝ Լօնդօնում և Փարիզում,
Թէհրանում և Թաւրէզում.
Վարդ բաց արած վարդի ծառ ես՝ տասն և հինգ տարեկան,
Անուշ սիրական։—
Այրում ես դու չորացնում կենաց կանաչ ծառը,
Մորթում ես ինչպես գառը.
Դարձրել ես ինձ քո գերիդ՝ միշտ և յաւիտեան,
Անուշ սիրական,—
Արի առաջիս ման արի, խօսիր, խաղացիր, պարիր,
Իմ սիրտս մխիթարիր.
Մի քայլդ արժէ ինձ համար հարիւր հազար դահեկան,
Անուշ սիրական։—
Չէ որ ես էլ քեզ պէս հայ եմ և քրիստոնեայ.
Խղճա ինձ գոնեա.
Սուրբ աւազանում մկրտուած և սուրբ լուսաւորչական,
Անուշ սիրական։
Մինչև երբ դու չարչարես ինձ և թողնես անճար,
Միշտ ու մուղարար.
Դու գիտես որ՝ ես օտար եմ, անտէր ու անտիրական,
Անուշ սիրական։
Ողջ աշխարհումս չեմ տեսել՝ քեզ պէս աննման խանում,
Ինչի՞ ես հոգիս հանում,
Կամ հոգիս առ ազատուեմ, կամ մի խօսք տուր վերջնական,
Անուշ սիրական։

Քո ձեռքովդ սպանիր ինձ և գերեզման տար,
Վրէս դիր մի քար.
Էլ չեն յիշում խեղճ Ղևոնդին, ոչ եղբայր, ոչ ազգական,
Անուշ սիրական։

ՏԵՏՐԱԿՍ.

Տետրակս, երբեմն լուռ և անխօս ես,
Երբեմն էլ անչափ տխրած ես, տետրակս.
Երբեմն կ՚երգես, քաղցր կը խօսես,
Երբեմն էլ տխուր կը լացես տետրակս։

Դու պարտէզ ես՝ լի պտղատու ծառերով,
Ճիւղերդ լի քաղցրանուշ բարերով,
Գոյնզգոյն հոտաւէտ՝ ծաղկանց շարերով՝
Հիւսած, կազմած, փունջ կապած ես, տետրակս։

Ծառատան ես, մի ծաղկազարդ պարտէզ ես,
Փնջեր կապած. դարսած, մի վարդի դեզ ես.
Կուզեմ որ դրչիս տակ՝ պահեմ միշտ քեզ ես,
Առանց դրչի դու մեռած ես, տետրակս։

Դու մառան ես, մէջդ լիքը անուշ միրգ,
Միջիդ ունես կարգ ու կանոն, ձև ու ձիրք.
Կուզեմ տպուես շուտով՝ դառնաս մի լաւ գիրք,
Եւ գնաս խօսքս տարածես տետրակս։

Թէև խօսքերդ քիչ՚ ինքդ բարակ ես,
Տողերդ ծուռ ու մուռ, շատ հասարակ ես.
Բայց ինձ համար՝ դու մեղր ու կարագ ես,
Ձեռքովս կազմած, կարած ես, տետրակս։

Զարդարուած ես դու գոյնզգոյն զարդերով,
Մանուշակով, ըէյհանով, վարդերով.
Ձես թողնիլ իմ սիրտս լեռը դարդերով,
Երբ որ տեսնեմ դու տպուած ես, տեարակս։

Տեարակս, ես քեզի կառաջարկեմ,
Վասնորոյ կը պատուեմ և շատ կը յարգեմ,
Ձեմ ուշացնիլ քեզի շուտով կուղարկեմ,
Միայն աչքերս չը թացես, տեարակս։

Այն էլ քեզի ասեմ՝ թէ լաւ իմանաս,
Նրա համար ես քեզի կուղարկեմ գնաս,
Որ մարդկանց մէջ՝ դու մի անուն ստանաս,
Ո՛չ լսեմ որ՝ դու կորած ես, տեարակս։

Ով մօտովդ անցնի, նրան ձայն կը տաս,
Եթէ խօսք հարցնի, պատասխան կը տաս,
Ձխնայես, խօսքերդ էժան կը տաս.
Թերթերդ մէկ-մէկ կը բացես, տեարակս։

Թէ իմ բութ դրիչս մի լաւ կը սրեմ,
Միջիդ տեսակ-տեսակ բաներ կը գրեմ.
Թէ իմանաս՝ ես քեզի շատ կը սիրեմ,
Պատճառն դու՝ իմ գրած ես, տեարակս։

Տեարակս, դու փոքր ես, և դեռ նորահաս,
Դեռ շատ բաներ ունես քեզանում պակաս.
Եթէ գնաս ման դաս և ուրախ յետ գաս,
Միս եղբօրդ էլ գտած ես, տեարակս։

Հազար լինն հարիւրին ձայնդ լսեցի,
Կանչեցի քեզ գտայ, ձայնով ասեցի.
Մայիս ամսին քեզի նոր սկսեցի,
Երեք ամսեայ հնարած ես, տեարակս։

Իրար համեմատ դրուած է բառերդ,
Հասունացած, համովուած է բարերդ.
Ղևոնդի ձեռքով դրուած է տառերդ,
Ձեռքովս մէկ-մէկ շարած ես, տեարակս։

Ո՞Վ ՄԱՐԴ.

Ո՞վ մարդ, դու քո մեղքով քո ծանր բեռով,
Պիտի ընկնես զրկանքի՝ ձնասի մէջ.
Թէ խոնարհուես Տէրին Իրա սրբերով,
Դու երկար չես մնալ պատուհասի մէջ։

Պիտի դիշեր ցերեկ դու ապաշխարես,
Սրբոց վարքն սիրես և սուրբ կեանք վարես.
Անձդ տանջես և հոգին հաւատարես,
Որ գտնուիս հաղորդի և մասի մէջ։

Թէ սիրտդ սուրբ պահես և չլինես ագահ,
Ամենևին անձիդ չընդունես շահ,
Ցաւիտեան հոգւովդ՝ դու չես տեսնիլ մահ,
Որ գտնուիս ժամ, աղօթքի, պասի մէջ։

Պէտք է հոգւով սրտով ողորմած լինես,
Նեղեալ, կապեալ տեսնելոյն պէս՝ լաց լինես,
Ձեռքով, սրտով, մտքով, աչքաբաց լինես,
Որ գտնուիս առաքելոց դասի մէջ։

Ամենայն ժամ պիտի լինի քո ջանքը,
Սիրել Աստուած և պահել պատուիրանքը.
Կը փայլի միշտ պայծառ քո հոգւոյ կեանքը,
Որ գտնուիս Տիրոջ տուած Տասի մէջ։

Անմահական ջրով պէտք է լողանաս,
Սիրտդ հանես՝ մէջն մաքուր լուանաս.
Ոչ խաբես, ոչ հարբես և ոչ գողանաս,
Որ գտնուիս սուրբ գրեանքի դասի մէջ։

Ղևոնդ, սուրբ բաժակն ճիշտ խաղողի կաթ պիտի,
Արդար արիւն, քաղցր մեղր ու կաթ պիտի.
Անխառն, անճառ, սուրբ և անարատ պիտի,
Որ գտնուի սրբութեան կարասի մէջ։

Ա՜Խ ԿԸ ՔԱՇԵՄ.

Ա՜խ կը քաշեմ կը հառաչեմ,
Մէկ ես եմ մէկ անկողին,
Ո՞ւմից խնդրեմ ում աղաչեմ,
Պիտի զոհուեմ սև հողին։

Նեղութիւն վիշտ ու տառապանք,
Պատկերիս մէջ նկարուած,
Տալիս է սրտիս հառաչանք,
Սրտիս՝ կրակով վառուած։

Ով ցաւ անգութ, ով քարասիրտ,
Քո չար խայթոց թունալից.
Տուեց սրտիս արիւն՝ արցունք,
Աչքս լաց արտասուալից։

Ո՞վ իմ եղբայր դու հարազատ,
Մի մոռանար աղ ու հաց,
Հասիր արա ցաւից ազատ,
Սրբիր իմ աչքերն թաց։

Ո՞հ դու էլ ես քրիստոնեայ
Քրիստոսի օրինակ,
Հա՛ս, բժշկիր վէրքս գոնեայ՝
Թող մի բարի յիշատակ։

Թէ խղճաս ինձ և ազատես՝
Այս անգութ ցաւի ձեռից,
Միշտ երկար կեանք կմաղթեմ քեզ՝
Անմահ երկնային Տէրից։

Ա՜խ, օրս մութ ու խաւար է,
Ձկայ մի լոյս մի ճրագ,
Հիւանդ սրտիս մէջ կը վառէ,
Անհանգչելի մի կրակ։

Նեղ օրեր ինձ պաշարեցին
Օտար երկրում ընդարձակ,
Չեմ կարող հասնել հայրենիք,
Այնտեղ քայլել համարձակ։

Իմ ուժերս թուլացել են,
Արի, հասիր օգնութեան.
Հասիր օգնել և ազատել,
Լինել պատճառ փրկութեան։

Ո՞հ իմ մահս շատ հեռու չէ,
Գլխիս վրէն կանգնած է.
Սարսափելի զէնքով զինուած,
Թևերն կը տարածէ։

Ղևոնդս՝ օտար պառկած եմ,
Մի խրճիթում հասարակ,
Մեծ նեղութեամբ պաշարուած եմ,
Փութա՜ Փրկիչ։ հա՛ս արագ։

---

* * *

Ես խնդրել եմ մի բան իմ ստեղծողից,
Ստեղծողս ողորմած և լսող է.
Իմ աչքն միշտ կուշտ է ոսկիից, փողից,
Իմ խնդիրքն ոչ ոսկի է, ոչ փող է։

Ոսկի, փող և գանձ է, գանձապահ ունի,
Ունեցողն՝ մինչ յաւիտեան շահ ունի.
Նա ոչ կորուստ ունի և ոչ մահ ունի,
Յաւիտենից յաւիտեան՝ միշտ մնացող է։

Միշտ ողորմած և բարի է իմ Տէրը,
Չի պակսիլ Նրանից իմ յոյս ու սէրը.
Նա ինձ շատ կը սիրէ քան թէ իմ հերը,
Պատճառն միշտ՝ նա իմ հովիս հասնող է։

Ով ամեն օր օրհնէ Նորա անունը,
Նա յաւիտեան կը հաստատէ իւր տունը.
Տէրն ամենագէտ և իմաստունը,
Ողջ սրտերի քննող, արդար դատող է։

Երբ որ աւելանայ իմ ցաւն ու վէրքը,
Կը հեռանան ինձանից՝ իմ սերտ ընկերքը.
Բարձրեալն մեկնելով իւր զօրեղ ձեռքը։
Ամեն կողմից իմ գործս կը յաջողէ։

Ով որ իրա յոյսը չկտրէ վերից,
Որդւոյն մարդոյ Յիսուսի սուրբ պատկերից.
Խնդրածը կստանայ այն հզօր Տէրից,
Որ երկինք և երկրի մէջ Ստեղծող է։

Ինչքան ճնայ մարդն այս փուչ կեանքի մէջ,
Այնքան կընկնի նա ցաւ ու տանջանքի մէջ.
Վերջն էլ կը մտնէ հող ու հանքի մէջ,
Սկզբիցն հող էր, վերջն էլ հող է։

Ղևոնդ. հան քո սրտից չարն ու նախանձը,
Ցանձնիր Տէրին քո բոլոր կեանքն ու անձը.
Չի խնայիլ քեզանից քո խնդրած գանձը,
Նա՝ որ ողորմած և ամէնակարող է։

ՍՈԽԱԿ.

Կաւ ուրախ մայիս, և բացուեց նոր վարդ,
Երգիր, մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ.
Զարթեց ողջ բնութիւն և խնդաց նոր մարդ,
Երգիր, մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
արտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Ո՞վ սիրահար սոխակ պարտիզի զարդը,
Ահա բացուել է քո՝ սիրական վարդը.
Սիրէք, սիրուէք, փարատելով իմ դարդը,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Վարդը իւր կարմիր երեսն բացել է,
Անուշ հոտը պարտիզում տարածել է.
Քո գալովդ սիրտս ուրախացել է,
Երգիր մի լռիր դու իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ դու սիրուն թռչնակ։

Երգէ, պատմիր դու քո գլխով անցածը,
Քո ձայնով թող զարթնի թմրած՝ քնածը.
Նոր սրբելով քո աչերի հին լացը,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Քաղցր ձայնովդ ուրախացրու ամենին,
Փառաւորիր վարդը՝ նաև վարդենին,
Թող լսելու դուրս գան քո անուշ ձէնին,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Երգիր, նախ ամեն մարդ՝ անէ իւր փորձը.
Նոր սկսէ, շարունակէ իւր գործը.
Սիրէ, պահէ, պաշտպանէ իւր եղբօրը,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Մինչ դալդ շատ թռչունք, ագռաւն ու Բուն,
Պարտէզումդ հաստատեցին իրանց բուն.
Պարտիզպանը քնած՝ մտած է խոր քուն.
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Երգիր, բարձրացրու քո դայլայլակը,
Թող ամաչէ ու հեռանայ թուխթակը.
Ձայնը կորէ, լռէ չալ կաչաղակը,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Դիշերդ ցերեկ արիր, մնացիր անքուն,
Պարտէզից զրկուելով մնացիր անբուն.
Ինձ նման առանց տուն՝ մնացիր և դուն,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ.

Սոխակ, եթէ նոցա կապես քո յոյսը,
Կերկարի գիշերդ՝ չի բացուիլ լոյսը.
Նոցա մօտ կանչէ վարդ. քո սիրած բոյսը,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Դու ինքդ էլ տեսնում ես քո աչքովը,
Թռչուններին՝ նստած վարդիդ ալ քովը.
Լաւ է քեզ մահանալ նրանց ձեռքովը.
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Սոխակ երգէ, անբաղդ կ՚մնայ մունջը,
Ագռաւը կը ջարդէ քո վարդի փունջը.
Երգելով անցրու սրտիդ մրմունջը,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Թռչունքն տեսնելով՝ քեզ լուռ ու խղճուկ,
Ջարդում են վարդդ, քեզ՝ կարծելով ճնճղուկ.
Ինչու՞ մնացել ես այդպէս խեղճ՝ ստրուկ,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների մէջի, դու սիրուն թռչնակ։

Սոխակ, թէ լռես էլ քեզ ասեմ չիտակ.
Բազէի ճանկերով կլինես նահատակ.
Զոհուիր վարդ կանչելով. թող մի յիշատակ,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Քեզանից յետոյ թող իրանք էլ իմանան,
Որ դու երգիչ էիր, իսկ իրանք անբան.
Գոնեա խղճան, ձագուկներիդ մի օր տան,
Երգիր մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Նաև ասեն՝ կեցցես սոխակ պատուական։
Զմոռացաւ իրա երգն պապական.
Երգով զոհուեց իրա վարդին սիրական,
Երգիր, մի լռիր դու՝ իմ սիրուն սոխակ,
Պարտէզների երգիչ, դու սիրուն թռչնակ։

Ա՜խ նա վարդին նայեց, իր վիզն ծռաւ,
Բազէին տեսնելով՝ մունջ կացաւ լռաւ.
Վերջն հառաչելով ահ քաշեց թռաւ,
Ղևոնդ, չերգեց, թռաւ իմ սիրուն սոխակ,
Ա՜խ ափսոս որ՝ թռաւ իմ սիրուն սոխակ։

ԱՆՆՄԱՆ ԽԱՆՈՒՄ.

Ո՛վ հաստատ հոգեհան կամ հոգի առնող՝
Դու գեղեցիկ, սիրուն, աննման խանում.
Առաջուց խօսք տուող վերջում յետ դառնող,
Չկայ աշխարհիս մէջ քեզ նման, խանում.

Հագնւում ես, զարդարւում ես, զուքւում ես.
Դուրս ես գալիս միանգամայն չքւում ես,
Ինձ տեսնելուս՝ տրաքւում ես, փքւում ես,
Ինքդ քեզ կարծում ես՝ մի մեծ բան, խանում։

Երբ ինձ պատահում ես չես տալիս բարով,
Կարօտս չես քաշիլ՝ թէ մնաս տարով.
Քեզ վերայ դանձ դրի հարիւր, հազարով,
Ով հաստատ մարդասպան՝ հոգեհան, խանում։

Դու ինձ հետ վարուեցիր՝ միշտ դառն, անգութ,
Ճշմարիտ ձեւացար, բայց դուրս եկար սուտ.
Տէրն ղրկէ քեզ մահ, ժանտախտ և կարկուտ,
Սպանէ քեզ դնեմ գերեզման, խանում։

Ամեն օր քո ձեռից ես կը կանչեմ դատ,
Աշխարհիս դարդերից ոչ լինես ազատ.
Տունդ գլխիդ քանդուի, և լինի բարբատ,
Մնաս անգերեզման՝ աննշան, խանում։

Խեղճ Ղեւոնդին արիր քեզնով ապական,
Սև լինի քո օրդ. և քո ապագան.
Հոգւով և մարմնով մնաս պարտական,
Դու սեւերես գնաս՝ դատաստան, խանում։

Ո՛Վ ՄԱՐԴ ՄԻ ԲԱՐԿԱՆԱՐ.

Ո՛վ մարդ մի բարկանար, քիչ մը համբերի,
Պատճառն փրկանք է համբերութիւնը.
Թէև քիչ միջոց մը՝ քո սիրտը կ'էրի,
Բայց վերջը բերկրանք է համբերութիւնը։

Համբերելը գիտութեան բուն արմատ է,
Զար, անհամբեր մարդը խելքից աղքատ է.
Շատ դէպքերում խելօքներին կ'ազատէ
Ամեն մի փորձանք է համբերութիւնը։

Չհամբերող մարդը մի վայրկեանի մէջ,
Իւր գլուխը կը ձգի մեծ բանի մէջ.
Դրուած է և՝ սուրբ Աւետարանի մէջ.
Մարդու համար կեանք է համբերութիւնը։

Անխելք մարդու բան է շուտ բարկանալը,
Իզուր տեղը կռիւ դալի բանալը.
Մի օր կ'ընկնի, դժուար է վերկենալը,
Հասկացողին թանդ է համբերութիւնը։

Աշխատիր համբերել դու քո կեանքի մէջ։
Այդ բանը կը գտնես դու գրեանքի մէջ.
Թէև չկայ տասը պատուիրանքի մէջ,
Բայց մեծ պատուիրանք է համբերութիւնը։

Ղեւոնդ. համբերութեամբ արար-աշխարհքի,
Ամեն մի գործերը դնւում է կարգի.
Համբերութեամբ մարդս հասնում է փառքի,
Մեծ փառք ու պարծանք է համբերութիւնը։

ՍՈՒՏ ԱՇԽԱՐՀ.

Լսիր պատմեմ քո ամենայն գործերը,
Ով խաբեբայ և անցաւոր սուտ աշխարհ.
Քո գործած անիրաւ՝ ունայն գործերը,
Ողջ էլ կուգան ու կը անցնեն շուտ աշխարհ։

Քո չար սերմը մեր մէջն էլ ցանեցիր,
Մեր ամեն գործերը դուն խափանեցիր.
Մեզ մեր քաղցր հայրենիքից հանեցիր,
Տարար և ձգեցիր հեռու մութ, աշխարհ։

Սատանան դնելով քո մէջ իւր բոյնը,
Օձի կերպարանքով թափել է թոյնը.
Արդէն սեացել է քո կարմիր գոյնը,
Մեզ օրեր ես տալիս սև՝ կապուտ, աշխարհ։

Ում հետը որ քաղցր բարև ես տալիս,
Նորան քաղցր կեանք ու արև ես տալիս.
Ոմանց այգիներին անձրև ես տալիս,
Ոմանց էլ տալիս ես քար, կարկուտ, աշխարհ։

Ոմանց մահացնում ես դեռ քսան ամաց,
Ծնողացը տալիս սուգ, շիւան ու լաց.
Ոմանց կուտաս հարստութիւն առատ հաց։
Ոմանց չես էլ տալի քիչ մը կուտ, աշխարհ։

Հաստատ երևում է որ անիրաւ ես,
Մեզ համար մեծ անտանելի մի ցաւ ես.
Էլ ինչ ասենք կեցցես աշխարհ դու լաւ ես,
Երբ որ գործեր չունիս արդար՝ զուտ, աշխարհ։

Մարդ չմնաց քեզանում ձեռ ձգեցիր,
Ամենքի վերայ ծանր, բեռ ձգեցիր.

Բոլորին էլ խփեցիր վեր ձգեցիր,
Հազար անգամ վայ քեզ, վայ հոգուդ, աշխարհ։

Անիրաւ, շատ էլ որ դու յոյժ զօրով ես,
Մի թէ պէտք է խեղճին այրես խորովես.
Իմաց, այդ է իսկ պատճառն որով ես՝
Քեզ կոչում եմ անխիղճ և անգութ, աշխարհ։

Լաւ իմանաս, կայ քեզանից ուժեղը,
Որ կարող է դնել վզիդ քո մեղը.
Որի առաջ դու կ'ընկնես յոյժ նեղը,
Եւ կը դառնաս նորա հանդէպ ճուտ, աշխարհ։

Շատ մարդիկ էլ քեզանից սովորեցին,
Տուին իրար ոտի տակը փորեցին.
Պարզ ջրերդ խառնեցին պղտորեցին,
Որդիքդ անիրաւ և պլուտ, աշխարհ։

Էլ քո մէջը բարի սերմեր չեն բուսնի,
Մարդիկ իրանց նպատակին չեն հասնի։
Շատ մարդիկ էլ քո երեսից չեն տեսնի,
Ուրախ զատիկ, ուրախ տարեմուտ, աշխարհ։

Պատճառն որ՝ փոխարկուել է քո սեռը,
Մի՞թէ ծնուել յայտնուել է չար նեռը.
Այսուհետ թէ լաւ մարդ ընկաւ քո ձեռը,
Պիտի թողնես տկլոր, ուրեան, լութ, աշխարհ։

Թէ իմանաս՝ մենակ ես չեմ քեզ ատում,
Վատ գործերդ վրադ մէկ-մէկ հաստատում,
Ողջ երկիրն է քո ձեռից դանդատում,
Արևելից մինչև արևմուտ, աշխարհ։

Ղևոնդս խեղճ, պանդուխտ, օտարական եմ,
Տուն ու տեղից զրկուած թափառական եմ,
Արդէն ուղիղ քսանութ տարեկան եմ,
Չեմ տեսել քեզանից մէկ օգուտ, աշխարհ։

ԺԼԱՏ ՀԱՐՈՒՈՏ.

Լատ հարուստ, ականջ արա իմ խօսքին,
Աշխատիր շուտով տես ճարը քո գլխին.
Քեզ չի փրկիլ եղբայր՝ արծաթն ու ոսկին,
Երբ որ մթնի այս աշխարհը քո գլխին։

Քո փողերը ինչքան որ շահ կը բերէ,
Այնքան էլ քո մէջը թամահ կը բերէ.
Վաղ կամ թէ ուշ՝ մի օր էլ մահ կը բերէ,
Այդ անհաշիւ մեծ դումարը քո գլխին։

Քառասունդ անցել է, կեանքիդ կիսումն ես,
Դեռ ես ոչ պասում, ոչ ուտիսումն ես.
Մի լաւ նայիր, հոգւով՝ մարմնով տես ումն ես,
Պտտվում է չար բէլեարը քո գլխին։

Քանի չէ կտրուել կենացդ թելը,
Բաժանիր աղքատաց դանձիդ աւելը.
Թոյլ տուր հոգիդ առնի սուրբ Գաբրիէլը,
Մի թողնիր որ կանգնի չարը քո գլխին։

Ինչքան ոսկի արծաթի հետ հաշտանաս,
Այնքան պիտի ծռուես՝ կռապաշտանաս.
Մահուան վերջին օրը՝ դու կը կշտանաս,
Երբ որ ածեն հողն ու քարը քո գլխին։

Մի օր գլխիդ կը խաւարուի արևը,
Կը հանես սպիտակ, կը հագնես սևը.
Կը գայ հոգիդ կը քաշքշէ չար դևը,
Կը տարածէ մութ խաւարը քո գլխին։

Ղևոնդ, ժլատ մարդը չի խրատուիլ խօսքով,
Թէկուզ ման տաս Լօնդօն, Փարիզ ու Մօսկով.
Նա խիստ զբաղուած է արծաթով ոսկով,
Լաւ է կարդաս դու այդ ճառը քո գլխին։

ՍՈԽԱԿ, ԵՐԳԷ՝ ՆՈՐ ԵՐԳԵՐԴ.

Սոխակ, երգէ նոր երգերդ,
Քո նոր բայուած վարդիդ համար.
Մինչ ճրբ մնան խոր վէրքերդ՝
Ցաւով լցուած վարդիդ համար։

Նստած ես վարդենւոյ թփում,
Արիւն արտասուք ես թափում,
Երբեմն աչքերդ խփում,
Զգում ես ցած վարդիդ համար։

Վարդիդ մէջը մտել է խար,
Մի՞թէ քեզի չունես խաբար.
Երգիր սոխակ, կանչէ հաւաք,
Տուր սուգ ու լաց վարդիդ համար։

Վարդդ իւր կարմիր թշերով,
Շրջապատուել է փշերով.
Առաւօտեան վաղ գիշերով,
Կանչիր Աստուած վարդիդ համար։

Նորա վերայ չինիր բունդ,
Նա է քո կենդանութիւնդ.
Աշխատիր չ՝տանէ քունդ,
Միշտ արթուն կաց վարդիդ համար։

Սոխակ, բաց քո կուրծքն ընքոյշ,
Վարդիդ համար թող խփեն փուշ.
Մի խնայիր կեանքդ, անուշ՝
Հոտով լցուած վարդիդ համար։

Հոտով վարդիդ վերայ բազմիր,
Բոլորքդ ծաղկունքով կազմիր.

Խարը գալուց պատերազմիր,
Զոհուիր սիրած վարդիդ համար։

Խաչպանեանցն եմ քեզ հարազատ,
Դարդներս իրար համեմատ.
Տալիս եմ քեզ անկեղծ խրատ,
Լեր անձնուրաց վարդիդ համար։

ՕՏԱՐՈՒԹԻՒՆ.

Ով դու անգութ օտարութիւն
Ես քո սիրտը քար եմ տեսել.
Քեզ ցանկալն է յիմարութիւն,
Քեզ անէյթիբար եմ տեսել։

Շատ եմ տանջուել ես քո ձեռով,
Հարուստ ես խայթող օձերով.
Հրդեհի պէս լի բոցերով.
Կրակդ միշտ վառ եմ տեսել։

Դու բուն ես սիրահարների,
Տուն ես քանդել հազարների.
Քո մէջ երիտասարդների
Կեանքը բարակ լոր եմ տեսել։

Զունիս դու հանդիստ օթևան,
Ոչ բարեկամ, ոչ հարևան.
Գիշերներդ սուգ ու շիւան,
Օրերդ խաւար եմ տեսել։

Շատ մարդիկ ես արել դերի,
Խորհուրդները թողել թերի.
Ես շատ պանդուխտ օտարների,
Ուխտը անկատար եմ տեսել։

Շատին էլ գլուխը կենդան,
Իջեցրել ես դերեզման.
Ոչ քո տուած դարդին դարման,
Ոչ էլ ցաւին ճար եմ տեսել։

Ով պատահմամբ ընկնի քո ծոց,
Շատ կը տեսնէ սուգ, լաց ու կոծ.
Ցեռ դառնալու չես տալ միջոց,
Միջոցդ երկար եմ տեսել։

Դու քեզ դիմողներին կուտաս.
Հոգս ու ցաւեր՝ մէկի տեղ տաս.
Ես քեզանում շատ պատուհաս,
Եւ շատ պատահար եմ տեսել։

Տարիներով մնացել եմ,
Քո մէջ շատ անգամ լացել եմ,
Ամեն բանդ իմացել եմ,
Գործդ անարդար եմ տեսել։

Քո ողջ գործերդ է դժուար,
Մարդուն կանէ մոլոր, շուար.
Ով չի եղել պանդուխտ օտար,
Չի ասի թէ աշխարհ եմ տեսել։

Հոգս ու ցաւերդ անհամար,
Գետի պէս վազում են վարար.
Ես քեզանում միշտ մուզարար,
Իմ ջանս տկար եմ տեսել։

Ես Ղևոնդն եմ քեզի ճանանչ,
Ճիւղերս չթողիր կանանչ.
Գնա հեռու ով անամանչ,
Քեզնից շատ զարար եմ տեսել։

ՉԵԿԱՒ ԵԱՐՍ, ՉԵԿԱՒ.

Ամբողջ տարին սպասեցի,
Չ'եկաւ եարս, չեկաւ.
Ամիսներով ես սպասեցի,
Չեկաւ եարս, չեկաւ։

Արդէն լրանում է տարին,
Սպասում եմ ես իմ եարին.
Աչքս ճաց ճանապարհին,
Չեկաւ եարս, չեկաւ։

Շատ նայելով աչքս ճղուեց,
Գլխիս հոգ ու մոխիր մաղուեց.
Չգիտեմ ինչով զբաղուեց,
Չեկաւ եարս, չեկաւ։

Մի թէ ուրիշին խաբուեցաւ,
Այս ինչ կրակ էր թափուեցաւ.
Ճանապարհները կապուեցաւ,
Չեկաւ եարս, չեկաւ։

Ճանբէքին երկար նայելով,
Մնացի գլխիս վայելով.
Մեռայ ծում ու պահք պահելով,
Չեկաւ եարս, չեկաւ։

Գնալով ցաւս զօրացաւ,
Սրտիս վէրքերը խորացաւ,
Մի թէ ինձի շուտ մոռացաւ,
Չեկաւ եարս, չեկաւ։

Ա՜խ ով արաւ այսպէս դիւան,
Որ միշտ անեմ լաց ու շիւան.
Թառամեցի ջահիլ՝ ջիւան,
Չեկաւ եարս, չեկաւ։

Ով որ գիտէ եարն ինչ է,
Գիտէ ցաւիս ճարն ինչ է.
Առանց եար աշխարհն ինչ է,
Չեկաւ եարս, չեկաւ։

Ես Ղևոնդն եմ ջա՜ր կանչելով,
Մանկուգամ հաւա՜ր կանչելով.
Մեռայ լալով եա՜ր կանչելով,
Չեկաւ եարս, չեկաւ։

ՍԻՐՏՍ.

Համբերելով ամէն բան էլ կը լինի,
Մի բարկանար, դու համբերիր միշտ սիրտս.
Էլի համբերելով տանել կը լինի,
Ամեն մի նեղութիւն, ցաւ ու վիշտ սիրտս։

Եթէ շատ բարկանաս, քեզի կը պատռես,
Բարալիկ ապակիդ շուտով կը կոտրես.
Ինքդ քո ձեռքովդ կեանքդ կը կտրես,
Աշխարհիցը կը տաս հրաժեշտ սիրտս։

Համբերութեամբ գործդ քիչ-քիչ առաջ տար,
Վերջը կը գտնես քեզ մի եղբ՝ ճանապարհ,
Այն ժամանակ քեզի ամեն մի դժուար՝
Գործերն էլ կը թուին դիւրին՝ հեշտ սիրտս։

Դիտես, չար թշնամին եթէ որ բաշրէ,
Քեզ կը խփէ, կը ջարդէ ու կը փշրէ.
Դու ամեն գործ ուղիղ դատէ ու կշռէ,
Կշիռդ պահպանէ ուղիղ՝ ճիշտ սիրտս։

Սիրտս, այս անգամ ինձ լսելու եկ դու,
Համբերութեամբ գործիր, գիշեր ցերեկ դու.
Եղիր բարի, և մի կենար երբէք դու՝
Ոչ ոքի հետ խռով՝ ամբարիշտ սիրտս։

Քո պապերից մնացած սուրբ աւանդը,
Պահիր ինչպէս ջաւահիր, ադամանդը.
Որով և խեղճ ողորմելի Ղևոնդը,
Դարձել է երգիչ կամ երաժիշտ սիրտս։

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ.

Ես սիրում եմ այնպէս մարդուն, որ իւր խօսքին միշտ հաստատ է.
Ես չեմ սիրում այնպէս մարդուն, որ խաբեբայ է՝ միշտ վատ է.
Իրա խօսքին հաստատ մարդը՝ կը վայելէ շատ բարիքներ,
Խաբեբայ, ստուտ խօսող մարդը՝ վատ է, և խելքից աղքատ է.

Ես սիրում եմ այնպէս մարդուն, որ խօսք կտայ՝ էլ չի փոխիլ.
Այնպէս մարդն բարի կը լինի, չար ճանապարհ ոտ չի կոխիլ,
Ես սիրում եմ այն մարդուն, որ իւր խօսքն փողով չի ծախիլ,
Այնպէս մարդն ճշմարիտ է և ճշմարտութեան արմատ է։

Ես չեմ սիրում այնպէս մարդուն, որ լեղուն չար է՝ բարի չէ,
Այնպէս մարդն ՀԼԱՍԱԿԱՐ՝ թունաւոր օձ, և կարիճ է.
Ես չեմ սիրում այն մարդուն, որ գործուն քաջ և արի չէ,
Այնպէս մարդու հոգս ու ցաւը՝ անքանակ ու անփարատ է։

Ես սիրում եմ այնպէս մարդուն, որի խօսքն ճշմարիտ է,
Ճշմարտախօս մարդն անդին՝ ջաւահիր ու մարգարիտ է.
Ես սիրում եմ այն մարդուն, որ իմաստուն՝ բայց միամիտ է,
Այնպէս մարդն չարից և չար՝ փորձանքներից միշտ ազատ է։

Ես չեմ սիրում այնպէս մարդուն, որ մտքումը ոխ կը պահի,
Այնպէս մարդն իւր ընկերի՝ վրայ վատ աչքով կը նայի.
Ես չեմ սիրում այն մարդուն, որ ընկերից բան կը խնայի,
Այնպէս մարդն քարասիրտ է, անողորմ է և ժլատ է։

Ես սիրում այն մարդուն որ՝ հիւրասէր և մարդասէր է,
Այնպէս մարդն կը կանչէ, կծաղկէ, պտուղ կը բերէ.
Ես սիրում եմ այն մարդուն, որ նեղեալներին, որքին տէր է,
Այնպէս մարդն ողորմած է, ձեռքն բաց է և առատ է։

Ես չեմ սիրում այն մարդուն որ՝ չի ունենալ բարի նպատակ,
Այնպէս մարդը ուրիշներին՝ չի լինիլ բարի օրինակ.
Ես չեմ սիրում այն մարդուն, որ չի սիրիլ թողնել յիշատակ,
Այնպէս մարդն թէ ժլատ է, և ժլատին համեմատ է։

Ես սիրում եմ այն մարդուն, որ մայրն սուրբ հոգւով
լցուեցաւ,
Այնպէս մարդն երբ որ ծնուաւ, իւր հօր համար լեզուն
բացաւ.
Ես սիրումեմ այն մարդուն, որ Տէրն ի նմանէ մկրտեցաւ,
Այնպէս մարդն զօրաւոր է, եօթը անունով՝ մի հատ է։

Ես չեմ սիրում այն մարդուն, որ զուր տեղը մարդ
կնախատէ,
Այնպէս մարդն մի ընկերից՝ միւսին սուտ կը գանգատէ.
Ես չեմ սիրում այն մարդուն, որ մարդ կմատնէ կամ
կատէ,
Այնպէս մարդն ինչպէս Յուդա՝ անիրաւ ու անհաւատ է։

Ես սիրում եմ այնպէս մարդուն, որ Ինքն էլ մեզի սիրեց,
Այնպէս մարդն եկաւ աշխարհ, զոհուեց մեզ համար՝ խաչ
կրեց.
Զևոնդս սիրում եմ այն մարդուն, որ մեզի սահման օրէնք,
դրեց,
Այնպէս մարդն երկնքումն է, Նա անմեղ ու անարատ է։

* * *

Այս արեգակս վայր ընկաւ, հողին հաւասար դառաւ,
Աշխարհս մթնեց ինձ համար՝ ցերեկ և գիշեր չկայ,
Օրեց օր դարդս շատացաւ, հարիւր ու հազար դառաւ,
Կրում եմ ես գիշեր ցերեկ, իմ ցաւերիս վերջ չկայ։
Ո՞ւր է այն դարդիմաց մարդն՝ որ հարցնի դարդ իմանայ,
Կրէ ինձ հետ իմ կրածն, տարիներ ու դար դիմանայ.
Թէ ցաւս պատմեմ մէկի մօտ, պէտք է հազար մարդ
իմանայ,
Չկայ, մի այնպէս բարեկամ, սրտակից ընկեր չկայ։

Խաբեբայ, սուտ խօսող մարդն՝ աշխարհումս շատացել է,
Սուտն ամեն տեղ տարածուել՝ չարն խիստ արմատացել է,
Մեծ ու փոքր չեն ճանաչում, ժամանակն վատացել է,
Քաշուել է խէր բարեքաթը, այսուհետև խէր չկայ։

Մէկ-մէկու խօսք են տալիս, խօսքի վերայ հաստատ չեն,
Մի աւազանի որդիք են, մէկ-մէկու հարազատ չեն.
Այդ պատճառով էլ աշխարհի՝ փորձանքներից ազատ չեն.
Նեռը ծնուել է ոմանց մէջ մարդկութեան պատկեր չկայ։

Փոքրները մեծի վերայ ձեռք են բարձրացնում,
Եղբայր եղբօր՝ որդին հօրը՝ էլ չէ ուրախացնում,
Ամեն մէկն իւր կամքին է, ով է պարում, հարցնում,
Էլ մեծ չկայ, փոքր չկա, ջահել չկայ, ծեր չկայ։

Իրար վրայ սուտ-սուտ խօսում՝ սուտ խօսքեր են հաստատում,
Ոչ իրար հաւատ ընծայում՝ ոչ իրար են հաւատում.
Իրար համար սուտ վկայում, կաշառք, երդում են ուտում,
Վերացել է խղճմտանքը, յոյս ու հաւատ չկայ։

Տիրոջ խօսքերին չեն լսում, չէ խօսում ամեն բերան,
Հոգիքն ծախում են փողով, մոռացել են պատուիրան,
Ամեն մարդ էլ աշխատում է՝ քաշել տանել դէպ իրան,
Մէկ-մէկու բարին կամեցող, ողորմած սրտեր չկայ։

Ի՞նչ կը լինի նեղ օրերում՝ ձեռ հասցնես եղբօրդ,
Կարեացդ չափ՝ օգնես նորան, որքան կպատէ զօրդ.
Դու որ զսկում ես եղբօրդ, ու անպատուում ես հօրդ,
Զես ամաչում կամ վախենում, մթթէ գլխիդ Տէր չկայ։

Ո՜վ հարուստներ, աղքատներին պաշտպանեցէք պահեցէք,
Տխուր, տրտում անձանց սրտեր՝ սփոփեցէք շահեցէք,
Ո՜վ փոքրներ, դուք ծերերին՝ հնազանդուեցէք նայեցէք,
Այնպէս արէք ձեր դարունը՝ գլխներիդ ձեռ չդայ։

Ո՞վ մարդասէր Տէր Աստուած իմ, միայն Քեզի յուսած եմ,
Փութա՛ փրկել ինձ փորձանքից, ես շատ տարակուսած եմ,
Ղևոնդս իւղածաղկի պէս՝ դաշտում մենակ բուսած եմ,
Այրվում եմ վառ արևի տակ, վրէս մէկ ստուեր չկայ։

ԱՆԳՈՒԹ ԱՂՋԻԿ.

Անգութ աղջիկ, անաստուած,
Ինձի՞ ոչ թողիր գնացիր.
Սիրտս հոգս ու ցաւով լցուած,
Հարիւր, բիւր թողիր գնացիր։

Ջիգարս սրով ծակեցիր,
Սրտիս մէջը կրակեցիր.
Բերանս խպառ փակեցիր,
Լեզուս լուռ թողիր գնացիր։

Մինչև ծաղկեցիր ծլեցիր,
Սիրտ ու ջիգարս հալեցիր.
Ուրախութիւնս խլեցիր։
Ինձ տխուր թողիր գնացիր։

Դու էիր լոյսն իմ աչաց,
Նոր ծլած ծաղկած, կանաչած.
Ձեռքերս ծոցումս խաչած,
Վիզս ծուռ թողիր գնացիր։

Աչքս միշտ քո ճանապարհին,
Կուլայ արտասուք ու արին.
Ղևոնդի պէս խեղճ օտարին,
Տուիր սուր՝ թողիր գնացիր։

*
* *

Հոգով սրտով սիրած եարս,
Ձտուին ինձ՝ չհաս արին.
Դանակով սիրտ ու ջիգարս,
Կտրատեցին, մաս-մաս արին։

Թշնամիք շուրջս պատեցին,
Ինձ իմ սիրածից զատեցին.
Անխիղճ անօրէն դատեցին,
Այսպէս մեծ պատուհաս արին։

Հոտաւէտ վարդս քաղեցին,
Օտարի վերայ ծախեցին.
Սիրտ ու ջիգարս դաղեցին,
Ինձի այսպէս վնաս արին։

Հասէք Ղևոնդի հարային,
Մի նայէք փողին փարային,
Ազատեցէք ձեր ծառային,
Սպանեցին, անմաս արին։

*
* *

Տաք երկիր մեն գալով՝ իմ գրքոյկն գրեցի,
Բայց շատերը չիմացան՝ ունեցած հանգամանքս.
Շատ էլ նեղ օրեր տեսայ, և ոմանց էլ խնդրեցի,
Եւ ոչ ով էլ լսեց՝ խնդիրք ու աղաչանքս։

Երկար կեանքս կարճանալով՝ քանի գնաց քչացաւ,
Օտարութեամբ սիրտս հալուեց, անձս մաշուեց փչացաւ,
Օրէց օր դարդս շատացաւ, ցաւերս չվերջացաւ,
Ամեն դեղ գործ դրի վերքիս, բայց իզուր անցաւ ջանքս։

Կեանքս ճխ ու վախով գնայ՝ տարիներով անցաւ,
Կարճ կեանքիս մէջ երբէք չեղայ անդարդ ու անցաւ,
Ցաւն ինձի վիշտ չարչարեց հոգւով ու անձաւ,
Բայց ոչով էլ չնկատեց իմ քաշած չարչարանքս։

Հազար ինն հարիւր թուին՝ փոխուեց իմ դրութիւնս.
Էլ տանելու հալ չունեցայ, հատաւ համբերութիւնս.
Այս թուիցն սկսեցի՝ գրել իմ դրութիւնս,
Երեք ամիս շարունակ, այդ եղաւ աշխատանքս։

Մինչև երեք ամիս տևեց ցաւս ու նեղութիւնս,
Լաւ է որ չքայքայուեց և չքանդուեց իմ տունս,
Մէկ սրտակից ոմն չեղաւ՝ դայ հարցնէ անունս,
Հանդիպողն էլ՝ յետ էր քաշուած, տեսնելով կերպարանքս։

Չհանդիպեց մի լաւ ընկեր, և ոչ էլ եղբայր ինձի,
Մոռացան քոյր ու եղբայր, ծնողք հայր ու մայր ինձի,
Ցաւն ուժս պակսեցրեց, ձգեց դէպի վայր ինձի,
Քանի գնաց աւելացաւ, զօրացաւ տառապանքս։

Ցաւն շուտով յաղթեց ինձի և վայր ձգեց անկողին,
Պատրաստ կացած կսպասէի, մեռնիլ զոհուիլ սև հողին.
Ցանկարծ մի խորն հառաչելով յիշեցի ստեղծողին,
Նա ուղարկեց ցաւիս ճարը, լսեց իմ հառաչանքս։

Մարդու մէկն այցելեց ինձ, գրութիւնս հարցրեց,
Խղճաց վրաս, մօտեցաւ ինձ, և օգնութիւն հասցրեց.
Մեռած սրտիս տխրութիւնը՝ ուրախութեան դարցրեց,
Վերցրեց անթիւ ցաւերս, նեղութիւն ու տանջանքս։

Նա ինձի քաջ յայտնի է, բարի մարդկանցից մէկն էր,
Սիրտ տալով ինձ, իմ գալիքն՝ կը խօսէր ու կը մեկնէր,
Ձեռքին ունէր ցաւիս դեղը՝ իմ վերքերիս կը մեկնէր,
Բժշկուելով նրա ձեռքից՝ ստացայ դեղարանքս։

Անունս Ղևոնդ է իմ, Դալաքօղլիանց ցեղէն եմ,
Շամախւոյ գաւառի մէջ՝ բնիկ Սաղիան գեղէն եմ.
Արթիւն-Իւզբաշի Սարգսեան, Խաչպանեանցի տղէն եմ,
Օտար երկրում անցաւ օրս, զուր գնաց ամբողջ կեանքս։

Գնա, ով իմ փոքրիկ գրքույկ, քո երգերն տարածիր,
Իմ տխուր ու տրտում սրտիս՝ խոր վերքերն փարատիր։—

ՑԱՆԿ

	Երես.
Վերջին և կարդա՛	3
Ով մարդ	4
Մի՛ պարծենաք	5
Մի ծուլանար	6
Հպարտ մարդուն	»
Ամբարիշտ մարդուն	8
Մարդ կայ	9
Ա՜խ ի՞նչ անեմ ես	10
Խաբեբայ աշխարհ	11
Անիրաւ բաղդ	12
Նամակ իմ սիրելի հայր Յարութիւն Խաչանեանցին, Սաղեան գիւղի տանուտէր	13
Ղօշմայ	16
Երգ	»
Քարամի (կամ ղօշմա)	17
Աչքի լոյս	18
Դուրէկիդ	19
Սիրոյ երգ	»
Եօթը տարի	20
Պանդխտի կեանքից	21
Այ քեզ օրինակ	23
Անմտան աղջիկ	27
Մուխամմադ	28
Միշտ պարտ ես	29
Կռունկներ	30
Աշխարհումս ես ամբարիշտ՝	32
Լսի՛ր որդեակ	34
Ով թագաւորաց թագաւոր	35
Ով մարդ	37
Յոյս կապէք	38
Մի խօսք ասեմ	39
Սոխակ եմ վարդիս ման կուգամ	41
Լերուն կոյս	44

Անուշ սիրական 45
Տեսարան 47
Ով մարդ 49
Ա՛խ կը քաշեմ 50
Ես խնդրել եմ 51
Սոխակ 53
Աննման խանում 56
Ով մարդ մի քարկանաք 57
Սուտ աշխարհ 58
Ժլատ հարուստ 60
Սոխակ, երգէ՛ նոր երգերդ 61
Օտարութիւն 62
Չեկաւ եարս, չեկաւ 64
Սիրտս 65
Ես սիրում եմ 66
Լոյս արեգակս 68
Անգութ աղջիկ 70
Հոգւով սրտով 71
Օտար երկիր 71

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

81

«Ազգային գրադարան»
NL0342469

34449